

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՊԱՌԵԹԻ ՍԱԼԱԶԱՐԵՑԻԱԾ

ԳՈՎԱՍԱՆԻ ՇԱՂԿԱՆՑ

Դաւիթ վարդապետ Սալաձորցի, ի Սալաձոր (1) գեղջէ կարնոյ գաւառին, թուի թէ ապրած է յ'ժէ կամ յ'ֆէ գարու, եւ գրած է պէս պէս Տաղեր, կը կոչէ զանձն «Որբ» կամ «Որբիկ», անտարակոյս զի ի մատազ հասակի կորուսած է զիւր ծնողաւ, Սարկաւագութեան ժամանակին է Տաղն «Գովասանք Մաղկանց», եւ ուրիշ Տաղ մի որ կը սկսի՝ Քեզի համրով օր էր տրված,

Կարմիր ու սեւ գիր էր գրրած.

Ի վերջն կ'ըսէ՝

Ես Դաւիթն եմ երիցացու.

որով կ'իմացընէ թէ քիչ ժամանակէն երէց կամ քահանայ պիտի ձեռնադրուէր. (տես Տաշեան, Յուցակ Հայ. 22. Միիր. Վիեննայ, երես 820 թ., համար մզ): Ի վարդապետութեան ժամանակին յօրինած է զՃաղն Փառք քեզ, թագաւոր փառաց, քեզ փառք տան աշխարհու ամենայն, եւ որ վերնագրեալ է՝ «Տաղս այս համեղագոյն... Դավիթ Վարդապետի է՝ գե[զ]ջիւ Սալաձորցի»: (Տաշեան, անդ, երես 460 ա, թիւ 6, համար ա): Ունի եւ ա'յլ Տաղ մի հոգեւոր, հայերէն եւ թուրքերէն խառն, որոյ սկիզբն է՝

Հայր Արարիչ, Տէր կենդանի,

եւ աւարտն՝

Սալաձորցի որբիկ Դաւիթ յուզի դարայ... .

այս ինքն Եիւզիւ գարա = Սեւերես. (Տաշեան, անդ, երես 820 ա, թիւ 1, համար ա):

Առաջիկայ Տաղս «Գովասանք Մաղկանց» հրատարակեցաւ նախ ի լրագրին Տփղիսի Մեղու Հայատանի. 1858: Երկրորդ անգամ ի մատե-

(1) Ի Խորենացւոյ Աշխարհացուցին՝ մի ի գաւառաց հին Աղձնեաց երկրին կը կոչուի Սաննձոր, ըստ հնագոյն ձեռագրաց ա'յլ 22. ունին Սալաձոր, Սալանձոր, Սալանոյ Չոր. տես Խոր. Աշխարհ. ապ. Վենետ. 1865, երես 607, եւ ծան. 5:

նին Գարեգին վարդապետի Սրուանձտեանց, Համով-Հոտով՝ տպ. Կ. Պոլիս, 1884. ի նմին տարւոջ հրատարակեցաւ եւ յամսաթերթին Մ. Մամուրեանի Արեւելիան Մամուչ, Մարտ, երես 137 — . Ապրիլ, երես 177 — . Սրուանձտեանցի անուամբ (1), որ դադափարած է զայն յամին 1878 ի Զեռագրէ Փէրին գեղջ Զարսանճագի: Երրորդ անգամ հրատարակեցաւ ի Տ. Կ. Կոստանեանցէ յ'Բ պրակի Նոր ժողովածութիւնն, տպ. Տիգիս, 1892. երեսք 66-75, հանդերձ համեմատութեամբ Մեղուիք եւ Համով-Հոտովի հրատարակութեանց: Երեսք 75-78: Չորրորդ անգամ ես կը հրատարակեմ համեմատութեամբ Արեւելիան Մամուչ եւ Կոստանեանցի հրատարակութեանց, եւ այն օրինակին զոր ընկալայ յամին 1880 ի Կ. Պոլիս ի Հ. Ստեփանոսէ Եազըճեան: Եւ զորմէ արդէն առիթ ունեցած եմ խօսելու ի Հայլական Բառաֆննուրիեան, երես 127: Եազըճեանի օրինակին հետ նոյն թուի Հ. Պ. Վ. Ալիշանի օրինակն՝ յիշատակեալ բազում ուրեք ի Հայրուսակի:

Մեծամեծ աղաւաղութիւնք ընթերցուածոց կան յամենայն ընդօրինակութիւնս Տաղիս որ հասած են առ մեզ, կամայական փոփոխութիւնք գաղափարողաց, տներու եւ տողերու յետեւյառաջութիւնք, եւ ընդհատութիւնք (lacunes): Մեղուիք օրինակին մէջ կը պակասեն տողքն 61-64, 87-100, 117-134: որ են վերջին տունքն: Առ Սրուանձտեանցի կը պակասեն տողքն 4-17, 23, 32: վերջին տունքն 127-134 ամփոփեալ են ի հինգ տողս: Եւ խառնաշփոթ են: Յօրինակին Եազըճեանի կը պակասեն տողքն 1-16, 18-20, 32, 95-102: տողերուն կարգն ալ այլազգ է, սկըսեալ ի 58դէն մինչեւ 94, եւ 103-114: Վերջին տունքն 127-134 զորս չունի Մեղու, եւ առ Սրուանձտեանցի հինգ տող է միայն, են ըստ օրինակին Եազըճեանի: Զակզբնաւորութիւնն, տողք 1-16, եւ զտողն 32: ունի Մեղու միայն: տողն 66 կայ եւեթ առ Եազըճեանի (եւ ի Հայրուսակի, թիւ 31): իսկ առղն 100 չիք եւ յոչ մի օրինակի:

Աւասիկ Սալածորեցւոյն «Գովասանք Մաղկանց» այնու կարգաւ զոր հրատարակած է Տ. Կոստանեանց: Կը նշանակեմ ծանօթութեանց մէջ զտարբերութիւնս ընթերցուածոց հետեւեալ համառոտութեամբք. Ե=Եազըճեան: Կ=Կոստանեանց: Մ=Մեղու Հայաստանի: Ս=Սրուանձտեանց: Ծետոյ այրութենական կարգաւ կը քննեմ զուղղազրութիւն եւ զիսկութիւն իւրաքանչիւր ծաղկի: Կը դնեմ նա եւ զմեկնութիւն օտար բառից Սալածորեցւոյն, հանդերձ այնոքիւք որ հայերէն են, բայց սակաւածանօթ:

(1) Կարծեմ Սրուանձտեանց հրատարակած է զայն նախ ի Մամուրեանի ամսաթերթին, եւ ապա յիւր մատենին Համով-Հոտով զոր ես չունիմ:

Օրէնեալ ես զու, Հա՛յր երկնաւոր, անքըննելի աստուածութիւն։ Կամիմ գովել սակաւ մի բան, միտքը տըկար, խելքս է ի քուն։ Անդամալոյժ եմ ու համր, հաշմն եւ արուգ ու թոյլ արիւն (1), Ոտներս բեկեալ, ձեռներս կապած, ականջը խուլ, ծանտր եւ խորուն։

5 Աչերս է կուր, չի տեսանել ճամբէս առեալ. ծով մի անհուն՝ Նաւըս (2) բեկեալ ալեկոծէ, ղարդ եմ եղեալ ի մէջ ծովուն։ Տարակուսեալ եմ մոլորեալ, ո'վ նաւապետ, իմ ճարը զուն։ Որպէս ետուր բըժըշկութիւն անդամալոյժ համր եւ խըլուն (3), Կամ թէ մօրէ կուրն որ բացեր թըքով կաւով ի կուր ծընուն։

10 Նոյնպէս տո՞ւր ինձ բըժըշկութիւն, ըզգաստանամ, լինիմ արթուն։ Բա՛ց զինելացս աշքս իմ մտացս (4), տո՞ւր ինձ շընորհք իմաստութիւն։ Որ ճանաչեմ չարն ու բարին, ու զիս հանսեմ խաւար գըրուն։ Տեսնում զաշխարհս եւ գոհանամ, փառք տամ Օծեալ Աստուածորդոյն։ Որ ըստեղծեաց երկինք, գետին, եւ բաժանեաց լոյսն ի մըթոյն։

15 Չորս տարերաց հրաման ետուր, հիմն եղան աշխարհիս շինուն։ Հողըն, ջուրըն, քամին, հուրըն շաղկապ են մինն ընդ միւսոյն։ *Անքակտելի սիրելիք (5) են, չեն բաժանիլ միմեանց սիրոյն։ *Հուրն որոտաց, քամին հընչեաց, եւ բաժանեաց զհողն ի ջըրոյն։ Ջուրն ըսպիտակ է ու աղի, քամին կարմիր անուշագոյն (6)։

20 Հուրըն դեղին է եւ լեղի, սեաւ եւ թըթու համըն հողոյն։ Հուրն օր է, քամին շաբաթ, ջուրըն ամիս, հողըն տարւոյն (7)։ Հուրն երեխայ, քամին մանուկ, ջուրն այեւոր, հողըն մահուն։ ***Հուրըն դանկ է (8), քամին նուկի, ջուրըն լիտը (9), հողն զանթարուն (10)։

Այսպէս չորս են մեր եղանակք (11), ամառ, աշուն, ձըմեռ, գարուն։ **25** Գարուն է ծառ (12), ամիսքն են ճիւղք՝ սեւ (13) ու սպիտակ պըտուղ շարուն։

Երկոտասան ամիսք որ կան՝ Մարտն է խարիսխ հիմըն տարուն։

(1) Մ' կ' համր, ու հաշմն եւ արուք, թոյլ արիւն։ — (2) Կամ բերես ճամբէս. առեալ ծով մի անհուն՝ Նաւըս. իսկ Մ' կ' չի տեսանել, ճամբէս առեալ ծով մի անհուն, Նաւս։ — (3) Մ' կ' համր եւ խորուն։ (սիալ)։ — (4) Մ' կ' աշքս ի մտացս։ — (5) Այսպէս Ե・իսկ Մ' կ' Ան-հաշտելի թշնամիք։ (սիալ)։ — (6) Այսպէս Մ' իսկ Մ' կ' կանանչագոյն։ — (7) Ինա՞ տարի. իսկ Ե՞ արիւն։ (սիալ)։ — (8) Այսպէս Ե・իսկ Մ' կ' զանկի։ — (9) Ե՞ ջուրն ընտրէ (= լոր է)։ — (10) Ինա՞ զանթար. Ե՞ հողը զանթարուն։ Մ' կ' հողն զանթար։ — (11) Մ' կ' եղանակ. Մ' Այս չորս եղանակ բարի. Ե՞ Այս չորս են եղանակ բարիք։ — (12) Այսպէս Ե・իսկ Մ' կ' Գարուն տարի։ Մ' տարին։ — (13) Այսպէս Ե・իսկ Մ' ունի ամիսք եւ ճիւղք, սեւ. Մ' կ' ամիսքն են ճիւղք, սեաւ։

*6'17 տողէս կը սկսի Եղջընեանի օրինակն։

**6'18 տողէս կը սկսի Սրուանձտեանցի օրինակն։ Եազընեան չու-նի զառլուն 18-20։

***Տողը 23 չիայ առ Սրուանձտեանցի։

Յորժամ Մարտին ամիսըն գայ՝ Տէրըն հրաման կուտայ հողոյն.

Հողն ի քընոյն հետ (1) կու զարթի, ճամբայ (2) կու տայ բոյս եւ տըն- կոյն.

Բուռնին գետնէն ու վեր (3) կու գան, կանանչ հագնին բոյսքըն բիթուն :

30 Ապա օդոյն հրաման կու տայ՝ որ կու թափէ զցօղն ի յամպոյն.

Յօլո և զաշխարհս (4) ցընծացունէ (5), զատուր լինի ծաղկըներուն.

***Ուրախանայ երկինք, գետին, բուրէ հոտըն անմահութիւն (6).**

Մաղկունք բացուին (7) հարիւր հազար, ցեղ ցեղ ներկած եւ գոյն- ըզգոյն (8).

Կերպիւ կերպիւ (9) հոտեր ունին, մինըն քան բզմիւսըն (10) սիրուն :

35 Նախ Զընծաղիկն (11) ու Զիգիտամ, Բարդն (12) ու Խաժուակն (13) յառաջադոյն.

Սոքա չորսըն միաբանին, ու ձայն ածեն ծաղկըներուն.

ԱՄաղկունք, զարթի՛ք ի խոր քընոյն, քանի՛ պառկիք (14) ներքեւ հոդուն.

«Ելէ՛ք, զաշխարհ զարդարեցէ՛ք (15), բիւրք ի բիւրուց (16) անթիւ անհուն» :

Ապա բուռնին (17) ծառք եւ աընկունք (18), ծաղկին (19) ծառ- ներըն պըսողատուն (20).

40 Յետոյ իներդօշն (21) ու Կոկոռոշն (22) կու ջահառին ի յատ զամպուն (23).

Ցինկըն գեղինծաղիկ՝ (24) ցընծայ, փայլէ, ծրփայ (25) մէջ ջըրերուն.

(1) Մ՝ ետ・ե՝ յետ : — (2) Այսպէս Մ・ե・իսկ Կ՝ ջաբա : — (3) Այս- պէս ե・իսկ Կ՝ բուռնին, գետնէն ի վեր : — (4) Այսպէս ե・իսկ Կ՝ ծողէ, աշխարհս : — (5) Ե՝ կու ցընծացնէ : — (6) Մ・Կ՝ անմահութեան, յանգա կը պահանջէ անմահութիւն : — (7) Այսպէս ե・իսկ Կ՝ բուռնին, — (8) Կ՝ գունզգուն, իսկ Ե՝ զանազանեալ գուն եւ զգոյն : — (9) Այսպէս ե・իսկ Մ՝ Կ՝ թիւրլու թիւրլու . Մ՝ Դուրլու դուրլու . (թուրքերէն Տիւրլիս Տիւրլիս, Ազգի ազգի, Կերպակերպ) : — (10) Այսպէս Ս՝ իսկ Ե՝ մին քան զմիւն . Մ՝ Կ՝ մինն քանց միւն : (11) Մ՝ Ճնծաղիկ : — (12) Մ՝ եւ չիթիղամ, բարթն . Ե՝ ու չիգիտամն, բարփն . (բարփն եւ Հ・Աղիշան ի Հայրուսակին, թիւ 324.) Ս՝ ու ջրիկատամ, բարթն . Կ՝ եւ ջրիկատամ, բարդն : — (13) Ե՝ խոժ- վակն . Կ՝ խոժուակն : — (14) Ե՝ քնոյն, չուրմ Ե՝ բիւրք, միայք : — (15) Այսպէս Ե・իսկ Ս՝ Ս՝ Ե՝ Կ՝ Զարթիք, աշխարհս ծաղկեցուցէք : — (16) Ե՝ բիւրք բիւրուց, Կ՝ բիւրք ի բիւրուց : — (17) Ս՝ Ապա բուռնին . Ե՝ Արմատանան : — (18) Այսպէս Ե・իսկ Կ՝ ծառք եւ անկոյնք . Ս՝ ծառն ու տունին : — (19) Ս՝ ծաղկի : — (20) Այսպէս Ե・իսկ Կ՝ ծառներն եւ պաղատուն : — (21) Այսպէս Ս՝ Կ・իսկ Մ՝ բանբուշն . Ե (եւ Հայրուսակ, 327, 695)՝ բաքուշն : — (22) Ս՝ Կ՝ քոքոռզն . Մ՝ Կօկոզն . Ե (եւ Հայրուսակ, 2846, 695)՝ սքօսնօշն : — (23) Ս՝ Կ՝ կու ջահառին ի հետ ամբոյն . Ե (եւ Հայ- րուսակ), 695, 2846)՝ որ ջաջառին ի հետ զամպուն . Մ՝ որ ճահ առնու ի հետ զամպուն : («Զամպ», բոյս, Հայրուսակ, 695, սխալ հ・տես ի Քըն- նութեան անուանց ծաղկանց յԱներառամ ծաղիկ :) — (24) Մ・Ե՝ Ցինկըն դեղին ծաղիկ . իսկ Մ՝ Կ՝ Ցինկըն գեղին ծաղիկ : — (25) Այսպէս Մ・Ե・իսկ Ս՝ Կ՝ ծառտայ :

*Զառողդ ՅԵ չունին Սըռւանձտեանց եւ Եազըճեան :

Զուրն ու չայիր չիման՝ (1) ծաղկունք ցընծան ի յետ ձնաբերնուն (2)։
Լեռն ու մարմանդ՝ (3) ծաղկի գառնայ, ծաղկունք ծաղկին ի սարեւ-
րուն (4)։

Միծաղին սարն ու ձոր ծաղկօք, ծափ զարնեն, ծըփան քիւրագոյն (5)։
45 Կարմիր Կակաջն՝ (6) ալ ու դեղին, մօռ ու մախմուր (7) զարկել
թերուն (8)։

Սըմբուլն (9) մանաւուշ է հագել, զըրմըզ է (10) եօթն-ալբօր ա-
րիւն (11)։

Հոռոմ ծաղիկն է փըշոտել (12), բուսել (13) հետ Մոշին Մորենուն (14)։
Պուտն ու Պըտուակն (15) ու Մատուտիկ (16) եւ ա՛յլ ծաղկունք բա-
ցուին սիրուն (17)։

Եղընծաղիկն (18) է խիստ դեղին, գոյնն է գունով քան զժիրանուն (19)։

50 Անջըրդի տեղըն կու բուսնի, զըւարճանայ (20) ամոան չորոյն (21)։
Մափն (22) ու Մափծակն (23) ու Մափկոտրուկ (24) կու բուսնին կար-
գըն եղընկուկոյն (25)։

Նաֆն (26) ու Չինարն ու Հոեհան՝ (27) հոտերն անուշ քան զամե-
նուն (28)։

(1) Ե՛ Զուրն չայիրն չիման : — (2) Ե՛ կու ցնծան յետ ձնաբեր-
նուն . Մ' որ ցնծան հետ ձնաբերնուն . Մ . Կ' ցնծան ի հետ ձնաբե-
րոյն : («Զնաբեր»), բոյս, Հայրուսակ, 1790, սխալ կ . օնս ի Քննու-
թեան անուանց ծաղկանց յ'Անբառամ ծաղիկ) : — (3) Այսպէս Մ . Կ' . իսկ
Ե՛ լեաոըն մարմանդ . Մ' լեաւն [լեաւն?] ու արմատ . (սխալ) : — (4) Ինմա'
ի սարերն . իսկ Ե՛ մէջ սարերուն : — (5) Մ' Սար ու ձոր ծաղկին, ծի-
ծաղին, ծափ զարնեն ու ծփան միազոյն . Ե՛ Սար ու ձոր ծաղկին ծիծաղին,
ծափ զարնեն ծփան միազուն : — (6) Մ' կանանչ . (սխալ) : — (7) Ե՛
մամիսուր : — (8) Ե՛ զարկեր թերուն . Մ' զարկեր է թերերուն . Մ . Կ'
է զարդարուն : — (9) Ե՛ Սըմպուլն . Մ . Կ' Սումբուլն : — (10) Մ' զըր-
մըզի . Ե՛ զըրմիէ (— զըրմզ Է) : — (11) Այսպէս Ե . իսկ Մ' եօթն եղբօր
արիւն . Մ . Կ' եօթն ալբրանց արիւն : — (12) Սխալ է յամենայն օրի-
նակս, Մ . Կ' փոշոտել (Հայրուսակ, 1725, փոշոտեր) . Մ' փուշուտել .
Ե՛ փոշոտեր : — (13) Մ' բուսեալ . Ե՛ բուսեր . — (14) Մ . Կ' հետ մոշին
մորենսոյն . Մ' հետ մոլի մօրերուն . (սխալ) . Ե՛ հետ մոլին (սխալ) մօրե-
նուն . (Հայրուսակ, 1725, մոլին ? եւ կարծէ Մոշին . այս է ուղիղն) :
— (15) Ե (եւ Հայրուսակ, 260!) պատվակն . Մ' պատւան . Մ . Կ' պուտ-
վարդն : — (16) Ե՛ պատվակն մատուտի . — (17) Մ' գերուն [ջերուն?] : —
(18) Այսպէս Մ . Ե . իսկ Մ' . Կ' Եզան ծաղիկն : — (19) Կ' քանց ծիրանուն :
— (20) Այսպէս Ե . իսկ Մ' . Կ' կու քրանայ : — (21) Այսպէս Մ . Կ' . իսկ
Մ' ամոան ջերերուն (թերեւս ջերուն, որպէս ունի Հայրուսակն, 617) .
Ե' ամոան ջըրոյն . (սխալ) : — (22) Մ' ծագն : — (23) Այսպէս Ե . իսկ Մ .
Կ' ծափծալն . Մ' ծափծարն : — (24) Մ' փափկոտրուկն . (սխալ) : — (25) Մ .
Կ' կու բուսնի կարգն իննկուկոյն . Մ' կը բուսնին կարգն զակոգուն . Ե'
որք կու բացուին կորք խակուկու : — (26) Այսպէս Մ . իսկ Մ . Կ' Նա-
փափն . Ե՛ Փափն . (նափ, կամ նափափ, կամ Փափ . Հայրուսակ, 2192.
անդ, 2465, փոխանակ Քափն՝ ընթերցիր Փափն) : — (27) Ե՛ ու չինար
ու սեհան : — (28) Մ . Կ' քանց ամենուն . Ե՛ է նարկիզնուն . (Տես սոդ 54) :

Ղատիֆան՝ (1) ալ է ներկուել (2), նըման բեհեղ ու ծիրանւոյն (3).

Ղարանքիլն (4) մօռ է հագել (5), գոյն գեղեցիկ է նարկիզոյն (6):

55 Ա՛յլ մանտը (7) ու մնծ ծաղկունք գովեմ (8), թուրիշահըն հետ
Սըշկերուն (9):

Աւգեր ծաղիկն ու Մամխոպոպ կու բացուին (10) հետ Առուելներուն (11):

Մափծափըն (12) ծափ տայ ծիծաղի' (13) Սիլծափի ծըլուն թելերուն (14):

Սիլծափըն (15) ծաղկել (16) ծիրանի (17), խիստ գեղեցիկ է, շատ
սիրուն (18):

Կաթնուկի ծաղիկն է գեղին, գոյնն է գըլուխ գեղիններուն.

60 Կողեզզըն ներկած զանաւուղ՝ (19) հաւան չի լի (20) միւս գուներուն:

*Մափծիլն (21) սպիտակ է հագել, ղեղին քաշել վերայ փորուն (22):

Բոլորն ամէն օրօն շարել (23), նայեցէք (24) ի սպիտակ շարուն (25):

Սիլն ու Սըլուայն (26) ու Մարուրիկն՝ սուրմայ են քաշել (27) աչերուն:

Շատ գոյնըզգոյն ներկեր ունին՝ նըման գեղձան ծարուրուն (28):

65 Հօրօտ (29) Մօրօտ մաւի ներկած ժանկառի նըման սուրմայուն,

*Աչեր հազար պիտի նայի, խառնուել (30) հետ Ախլայիբն ծորուն:

Հիմի ծաղկունքն են զօրացել, (31) չեմ գիտել ո՛րն է հետ որո՛ւն:

Խառնուել (32) են յիրար, կու ցընծան, եւ փառք կու տան տես-
րանց Տէրուն (33):

(1) Ե՛ Զատֆան. (սիսալ): — (2) Մ՛ ալ է ներկեր. Ե՛ է ալ է ներ-
կած. — (3) Մ՛ գունն է նման ծիրան բեհեղուն. Ե՛ վիրանման ծիրան
բեհեղուն. — (4) Այսպէս Ե. հակ Կ՝ Ղարաֆիլն. — (5) Ե. Կ՝ հագեր:
— (6) Ե. հոտըն անուշ քան զաննուն. (սես տող 52): — (7) Այսպէս Ե.
հակ Ս. Կ՝ Ալլ մանդր. Մ՛ Այալ մանդր. • (8) Մ՛ ու մնծ ծաղիկներն գո-
վեն. (սիսալ): — (9) Մ՛ թուրինչան հետ մշկերուն. Ե՛ թուրինչան
հետ մշկերուն, (Հայրուսակ, 775, թաւրընջշահն հետ մշկերուն. ուր յի-
շին եւ գրուրինին թաւրինշահ, թուրնուշահ). • Ս. Կ՝ թուրն ու շահէն
հետ մշկերոյն: — (10) Մ՛ Այսափիր մամխոպոպն կը բուսնի: — (11) Այս-
պէս Ե. (եւ Հայրուսակ, 157). հակ Ս. Կ՝ առուեցերուն: (12) Ե՛ Մափծափ:
— (13) Մ՛ ծիծաղատի: — (14) Մ՛ ծիլծապն ծիլ ի մերուն. Ս. Կ՝ ծիլծափի
ծլոյն թփերելուն [թթփերուն ?]. Ե. (եւ Հայրուսակ, 917) լծափն ծըլուն
թելերուն [թերերուն ?]: — (15) Այսպէս Մ. Ե իսկ Ս. Կ՝ Մալծափն:
— (16) Ե՛ ծաղկեր. Ս. Կ՝ ծաղկի: — (17) Մ՛ հետ ծիրանուն: — (18) Մ՛
գեղեցիկ եւ վախ սիրուն. Ե՛ գեղեցիկ ու վախ վախ սիրուն: — (19) Այս-
պէս Կ (եւ Հայրուսակ, 1468). Մ՛ զանավուղ. Ե՛ Կողեզզն զանաւաթ է հա-
գեր (Հայրուսակ, 1468, Կողեզզն է զանաւաթ հագեր): — (20) Ե՛ հա-
ւան չէ: — (21) Ե՛ Սիլծափն: — (22) Այսպէս Ե. (սես եւ տող 72.) Մ՛
գլխոյն. Կ՝ գլխուն: — (23) Ե՛ օրօն շարեր. (Հայրուսակն, 3258, 2528,
եւ 565, ծան. 2, կը սիսալ բոյս համարեղով զօրօն. տես ի Սեկնութեան
բառից Սալամորեցոյն .) Մ՛ շար են շարուել, — (24) Ս. Կ՝ հայեցէք:
— (52) Ե՛ սպիտակ զարուն: — (26) Ե՛ ծլվայն. Ս. Կ՝ ծըլուանն: — (27) Ե՛
քաղեր. (սիսալ): — (28) Ս. Կ՝ նման դերձանի ծարուրոյն. Ե՛ յինչ նման
գեղձան ծարուրուն: — (29) Ե՛ Խօրօտ: — (30) Ե՛ խառներ: — (31) Ե՛
ծաղկունքն են զօրացեր. Ս. Կ՝ ծաղկունքն զօրացան: — (32) Կ՝ Խառնուել.
Ե՛ Խառներ: — (33) Ե՛ ուրախութեամբ փառք կու տան տիրանց:

*Տողքդ 61-64 չկան ի Մեղուի:

**Տողդ 66 կայ միայն առ եաղքճանի (իւ ի Հայրուսակի, 31):

Տուղտն եւ Թուրթն (1) ու Մեղրիկ ծաղիկն նըման են ծաղկած (2) ծաւ
ռերուն .

70 Սուտ-Վարդն է բաժնուել (3) յերամէն՝ խառնուել (4) յերամըն Մաս-
րենուն (5) :
Խաշխաշն ըզթագն (6) է բոլորել (7), գեղեցկացել (8) հետ Թուխմա-
րուն (9) .

Բոլոր գըլխուն՝ ալ է կապել (10), մօռ է քաշել վերայ փորուն :
Խորնդատն ծաղկել ծառովն՝ (11) ընկեր եղել հետ Գոճմերուն (12) .

Մաղկունքն ամէն յերամ ժողվել՝ ծաղիկ կու տան մնդուներուն :

75 Բարձուենելին (13) գոյնն է պակաս, հոտիկն անուշ է բէջարուն (14) .
Քան զամէնըն (15) խոնարհ կենայ, կու բումնի (16) ծաղկունաց (17)
հեռուն :

Լեզուակ (18) անուն ծաղիկ մի կայ՝ որ կու բացուի (19) մէջ մար-
գերուն (20) .

Մաղիկըն մօռ մանաւուշ (21) է, նորա երամն է ինքնագոյն (22) :

Շըրուան (23) ծաղիկն է սպիտակ, մարգըն (24) բուսնի հետ Մըրուա-
նուն (25) .

80 Խոլորձըն ջահառի (26) թըփին, պայծառանայ առաւօտուն :

Սինձն, Երիցուկն ու Եղերդակըն (27) կու սպասեն Արեւորդուն,
Նոցա երամն ուրիշ է (28), կու շըրջին զօրն (29) հետ արեւուն :

(1) Ե՞ Թուրթն . Մ՞ Թուղտն . (սխալ) : — (2) Մ . Ե՞ ծաղկանց . (սխալ) :
— (3) Ե՞ է բաժնուեր . Մ՞ բաժնեաւ . Կ՞ բաժնուել : — (4) Կ՞ խառնումիլ . Մ՞
խառնեալ . Ե՞ խառներ : — (5) Մ՞ յերամ մասրինուն . Ե՞ յերամըն մասրե-
րուն . Կ՞ յերամ մասուրուն : — (6) Այսպէս Ե . իսկ Մ՞ թագն . Կ՞ թագ :
— (7) Մ՞ է բոլորեալ . Ե՞ է բոլորի : — (8) Մ՞ գեղեցկացեալ . Կ՞ . Ե՞ գեղեց-
կացեր : — (9) Այսպէս Մ . Կ . իսկ Մ՞ հետ զաթմարուն . Ե՞ ի հետ զաթ-
մարուն : — (10) Մ . Կ՞ կապեր . Մ . Ե՞ ներկեր : — (11) Ե՞ ծակներովն :
— (12) Մ՞ կօչքէրունուն . Ե՞ ձեր եղեր է կոճմերուն : — (13) Մ՞ Բացուենիկին .
Մ . Կ՞ Բալձնակին . Ե՞ Բարձենիկ : — (14) Այսպէս Կ . իսկ Ե՞ բէջարուն .
Մ՞ պէջարուն . Մ՞ զպէչերուն . (սխալ) : «Բէջար կամ Բէջար», անուշանու
ծաղիկի, Հայրուսակ, 343, սխալ կ . Տես Բէջարէ ի Մեկնութեան բառից
Սելաճորեցոյն» : — (15) Ե՞ Քան զամենայն . Կ՞ Քանց ամէնն : — (16) Ե՞
կենայ, ու բացուի . Կ՞ Կուկենայ, կուբուսնի : — (17) Այսպէս Ե . իսկ
Կ՞ ծաղկունանց . Մ՞ ծաղկանց : — (18) Մ՞ Լուակ : — (19) Այսպէս Ե . իսկ
Կ՞ կըրացուի : (20) Մ՞ Քարերուն : — (21) Ե՞ մանաւայ : — (22) Այսպէս
Ե (եւ Հայրուսակ, 894) . Մ՞ Նորա երամն է ինքնագոյն . Մ . Կ՞ Նորա երանգն
է երկնագոյն . (Տես եւ տող 82 . Նոցա երամն ուրիշ է») : — (23) Մ . Կ՞ . Ե՞
Շըփան : — (24) Մ՞ ու սպիտակն մարս . (սխալ) : — (25) Այսպէս Մ . Կ . իսկ
Ե՞ բուսեր հետ մրվանուն . Մ՞ կըրուսնի հետ միանձնուն : — (26) Այսպէս
Մ . Կ . իսկ Ե՞ ջահ առեալ . Մ՞ Խոլոցն ջահ առնու : (27) — Այսպէս Ե (եւ Հայ-
րուսակ, 635) . իսկ Մ՞ եղրթակն . Մ . Կ՞ եղրթագն : — (28) Մ՞ ուրիշ այ ,
— (29) Այոպէս Ե (եւ Հայրուսակ, 635) . Կ՞ որ կըրջեն :

Գամուաաշն (1) ու Զատր-ծաղիկն՝ կոճակն՝ ծաղկել արտերուն (2)։

Կոընկուկն ու կաքուեզեզն (3) խիստ (4) կու բուսնին մէջ քարերուն (5)։

85 Ակընջուկն ու Գառինդըմակն (6) կարօտ են Մանուշկին (7) տեսուն (8)։

Մուրտն ու Շուշան ու (9) Բրաբիոն հասրաթ են թէ զիրար տես-
նուն (10)։

* Աւամն գուլգագ է (11) ներկած, գոյնն է գըլուխ կարմիրներուն։

Միշտ գեղեցիկ է խիստ (12) պայծառ, բուսնի մէջ պաղ աղբիւրնե-
րուն (13)։

Խաժն ու Խալինճն ու (14) Լալազարն, հոտիկն անուշ Հազարդարուն (15),

90 Վարդն ու Գուլվարդն ու Հազրէվարդ (16), երամըն (17) ծանր է
Վարդերուն (18)։

Ոսկեծաղիկն (19) պայծառացել՝ (20) գեղեցկացել լաւուն լաւուն (21)։

Բոլոր զըլսոյն ջըլայ զարկել (22)։ սա է ծաղկանց ենգիչարուն (23)։

Շարշարուրիկ ծաղիկ մի կայ, գեղին քաշել վերայ փորուն (24)։

Թերերն (25) ամէն պազամ ներկել, նորա ոլոքն որպէս Տորուն (26)։

95 * Գուլիսապահ ծաղիկ մի կայ՝ որ չի բացուիլ (27) զօրն արեւուն։

(1) Ս յունի. Ս . կ' կամօտաաշն . Ե (եւ Հայրուսակ, 404)* Գաման-
տրաշն : (2) Մ' կ' կոճակն կուծաղիկ արտերուն . Ե՝ գօճակն*ծաղկեր ա[ր]-
տերուն, Մ' կոճակ ծաղկի հետ արտերուն . — (3) Ե՝ կոընկուկն (եւ Հայրու-
սակ, 1345, 1386) եւ կաքուի եղէդն (Հայրուսակ, անդ, կաքուեզեզն,
կազուեղէդն) . Մ' կ' կանկուկն ու կակվեղիկն . Մ' Խնկուկն ու կագե-
ղէդն . — (4) Մ' խիտ : — (5) Ե՝ կը բացուին մէջ սորքերուն (Հայրուսակ,
1545, 1386, սորքերուն) : — (6) Այսպէս Ս . կ' իսկ Մ' Ակնտակն ու գառի
գմակն . Ե՝ Ակն եւ տունկն եւ գառին գմակն . (Հայրուսակ, 45, Ակնեւ-
տուկն եւ Գառնիդմակն . եւ կը մերժի զլկանջուկ . իսկ ի 423 կը գրէ
Ակընջուկ) : — (7) Ե՝ մանիշէկին : — (8) Մ յունի կարօտ են Մանուշկին
տեսուն : — (9) Այսպէս Ս . կ' իսկ Ե՝ Մուրտն եւ ուսամն եւ . (Հայրու-
սակ, 389, Մուրտն ու Սուսամն եւ . որ եւ յերես 511 ասէ . «Ուսամն Սա-
լածորեցւոյն ուղղելի է Սուսամն») : — (10) Սովիմն կարգաւ ունի Ե . իսկ
Մ' Հասրաթ են իրար տեսնելուն մուրզն ու շուշանն ու բրաբիոն . Մ . կ'
Հասրաթ են իրար տեսնելու մուրտն ու շուշան ու բրաբիոն : — (11) Ե՝
Սուսամն գուլգագ ի . իսկ Ս . կ' Սուսամն կուհազ (սիսալ) է : — (12) Ե՝
գեղեցիկ ինքն է : — (13) Այսպէս Ս . իսկ կ' բուսնի պազապիւրներուն .
Ե՝ բուսեր ի մէջ աղբըրներուն : — (14) Այսպէս Ս . կ' իսկ Ե (եւ Հայ-
րուսակ, 984)՝ Խաճն խալիքն եւ, — (15) Այսպէս Ե . իսկ Մ . կ' անուշ
եւ զարդարուն . (սիսալ) : (Ուղղականն է Հազարդարուն, եւ ոչ Հազարդա-
րա, որպէս համարի Հայրուսակն, 1579 . Տես ի Քննութեան անուանց ծաղ-
կանց) : — (16) Այսպէս Ե . իսկ Մ . կ' հարզէ վարդ . (սիսալ) : — (17) Այս-
պէս Ե . իսկ Մ . կ' երամ . — (18) Ե՝ վարդենոյն : — (19) Ե՝ Ոսկի ծաղիկն .
— (20) Ե՝ պայծառացեր . Ս . կ' սուրաթ առեր : — (21) Ե (եւ Հայրու-
սակ, 2401)՝ լայիւն լայիւն : — (22) Ս . կ' Բոլոր գլխոյն ճզայ շարել . Ե
(եւ Հայրուսակ, 2401)* Թերերն ամէն ջզա զարկեր : — (23) Այսպէս Ե . իսկ
Ս . կ' ենիշչարուն : — (24) Այսպէս Ե (եւ Հայրուսակ, 2291) . իսկ Մ . կ'
գեղին հագել հետ ընկերուն : — (25) Ս . կ' թփերն : — (26) Ս . կ' առորն :
— (27) Այսպէս Ս . կ' չի բացուիր :

*Տողքը 82-100 չկան ի Մեղրուի :

**Տողքը 95-102 չկան յօրինակին եազըմեանի :

Արեւմըտուն (1) յետ կու բացուիք, պայծառանայ մէջ գիշերուն :
 Գուգէլ (2) անուն ծաղիկ մի կայ՝ որ զեղ է ամէն անրժիշկ ցաւերուն .
 Փեննայ (3) ծաղիկն ու կացակն՝ Աստուած դեղ տըւել (4) դարդերուն :
 Խազալն թուփն է բոլորել, բուսել է հետ ձըշնարօտուն (5).

100

Դինարրին հոտն է գովական (6), շատոնք հասրաթ նորա հոտոյն (7) .
 Մաղիկըն փունջ փունջ է եղել, մարդ չի յագել իւր կարօտոյն (8) :
 Ճաշկին ծաղիկն (9) է խիստ հոտով (10), դեղին նըման է Զաֆրա-
 նուն (11) .

Բարձըր լեռներ կու բուսանի (12) Զաֆրանըն հետ կընքաւորուն (13) :

105 Զամրիւղ ծաղիկն է փսիստ գունով (14), ինքըն կարմիր պայծա-
 ռագոյն (15) .

Նարդոս ծաղիկն ու կինամոն՝ (16) լըցուել են Աստուծոյ բարոյն :

Խաս Թութիայ (17) ծաղիկն որ կայ՝ (18) ձեռքըն չինդնիլ (19) ջա-
 ռահներուն .

Ամէն սահմանք չի գըտնըւիլ (20), դիյմաթ (21) չունի ինքն իւր տեղ-
 ույն (22) :

Այն Ասպուզան (23) ծաղիկն որ կայ՝ (24) իսկի վար չի գալ լեռնե-
 րուն .

110 Վառ կապուտ է, հոտըն (25) սակաւ, արմատըն դեղ է եղներուն (26) :
 Այն Անթառամ ծաղիկն որ կայ՝ (27) ծաղիկ ծաղկել ծաղկըներուն (28) :
 Ամառ ձըմեռ չի չորանալ, հինն է (29) պայծառ նըման նորոյն :

(1) Այսպէս ս. իսկ կ' Արեւմտեան : — (2) Այսպէս ս. իսկ կ' (եւ Հայրուսակ, 526)՝ Գուգէլ : — (3) ս. Փէնա . կ' Փէնահ : — (4) ս.
 տուել . կ' տուեալ : — (5) Ս. կ' ճշնարօրուն . (Հայրուսակ, 958, Խա-
 զալին . . . ճշնարօտուն) : — (6) Մ' Դինէվարդին հոտն է գիշնեվուն :
 — (7) Մ' շատ ոք հասրաթ նորա հոտոյն . Մ. կ' շատոնք հասրաթ են
 նորա հոտոյն : — (8) Մ' Մաղիկն փունջ փունջ մարդ չէ էլէլ իւր կա-
 րօտուն : — (9) Այսպէս ս. իսկ Մ' Ճաշգին ծաղիկն . ս. կ' Ճաշքինթ
 ծաղիկն : — (10) Այսպէս ս. կ' իսկ Մ' հոտով անուշ . ե' և խիստ գունով :
 — (11) Այսպէս Մ' . ե' իսկ Մ' . կ' զեղին է նման զաֆրանոյն : — (12) Ե'
 Բարձըր լեռներ կը բուսանի . Մ' Բարձըր լեռներ կըրբուսանին . Մ. կ' Բար-
 ձըր լեռներն կուրուսունի : — (13) Մ. կ' զաֆրանն հետ կնքաւորոյն . Մ'
 զաֆրանին հետ կընկանվարուն . ե' (եւ Հայրուսակ, 1880, 705)՝ զաֆրանն
 հետ ճկնաւարուն : — (14) Այսպէս Մ' . իսկ Մ' . կ' հոտովն անուշ . ե' հո-
 տով անուշ : — (15) Այսպէս ս. իսկ Մ' . կ' ինքն սպիտակ է կարմրագոյն :
 — (16) Ե' նարդոսն եւ կինամոն ծաղիկն : — (17) կ' Խասթութիա,
 — (18) Ե' ծաղիկ մը կայ : — (19) Ե' չիզսիր . Մ. կ' չի գալ : — (20) Ե'
 չին գանուիր : — (21) Ե' դիմաթ . Մ' դիյմաթ . (սիսալ) : — (22) Խմա՛ տեղին :
 — (23) Ե' Անասրօսան . կ' Այն սապոււան . (սիսալ) . Մ' Այն բուրաստան .
 (եւս ի ծան. 145 տոյին, Բուրաստան) : — (24) Ե' ծաղիկ մի կայ : — (25) Ե'
 հոտն է : — (26) Այսպէս Մ' . իսկ կ' արմատն զեղ է եղներուն . Մ' օր ու
 սահմաթ է եղներուն . Ե' ի սահմանդ եղեր է իզներուն : — (27) Ե' Մէկ ան-
 թառամ ծաղիկ մի կայ : — (28) Այսպէս Մ. կ' Ե' . իսկ Մ' ծայրերուն : — (29) Ե'
 իինըն :

Այս Նունուֆար ծաղիկն որ կայ՝ (1) բուսնի (2) յատակը (3) ծռ-
վերուն (4).

Օձերըն զինքըն կու պահեն, մարդ չի քաղել նոցա ահուն:

115 Այս Բուրաղան (5) ծաղիկն որ կայ՝ (6) վարդ է շարել հետ բան-
գերուն (7).

Կարմիր խընձոր թագաւորաց, ոսկի բուրգառ խընկով լեցուն (8):

*Այս Բալասան (9) ծաղիկն որ կայ՝ երամըն (10) մեծ ծանր ամե-
րուն (11):

Սուրբ մեռոնին (12) մակարդն այն է՝ որ կու կարդան մէջ գըրքե-
րուն (13):

Այս Սուսամբար ծաղիկն (14) որ կայ՝ գեղեցկացել (15) պայծա-
ռագոյն:

120 Երբ որ բացուի վերեւ (16) թըփին՝ խիստ գեղեցիկ է (17) ու սիրուն:
Այս Համասփիւռ ծաղիկն որ կայ՝ ծաղիկել ծաղկովն (18) հազարադոյն:

Կոյր աշերուն լոյս կու բերէ՝ թէ Տէրըն տայ՝ աղամորդոյն:

Երկոտասան արմատ ունի, բուսնի երկոտասան տարւոյն:

Ամէն թըփին գոյն մի ծաղիկ (19), Հրեշտակը զմայլին (20) անուշ
հոտոյն:

125 Արքայիկ (21) օձն է սպիտակ (22), խիստ խորագէտ ու իմաստուն (23):

Համասփիւռին (24) կու հետեւի, եւ զօրութիւն կ'առնու հոտոյն (25):

Մօ՛ (26) Սալածորցի սարկաւագ, գաստան արիր ծաղկըներուն:

(1) Ե՛ Մէկ Նունուֆար ծաղիկ մի կայ: — (2) Ե՛ բուսեր: — (3) Այս-
պէս՝ Ս・Կ・իսկ Ե՛ յատակն. Ե՛ յեզերու: — (4) Ե՛ ջրերուն: — (5) Ե՛
(եւ Հայրուսակ, 382, ուր գրի եւ Բուրաղան) Մէկ բուրաստան. (Տես ի
ծամ. **109** տղին, Ասպուզան.) Ե՛ եւ այն բօզան, — (6) Ե՛ ծաղիկ
մի կայ: (7) Ասյափէս Ե՛ իսկ Ե՛ վարդ է շարեր իւր պատկերուն. Ս・Կ
վարդ է շարեր հետ խնկերուն: — (8) Ե՛ է խընկենոյն. Ե՛ հետ խնկե-
րուն: — (9) Ե՛ պալասան: — (10) Ե՛ իրամի: — (11) Այսպէս Ե՛ (Հայ-
րուսակ, 281, երամըն մեծ է Ամիրնուն.) Ս・Կ・երամն շատ է: — (12) Ս・
Կ・Սուրբ մեռոնի. իսկ Ե՛ լոկ' Մեռոնին: — (13) Այսպէս Ե՛ իսկ Ս・Կ՝ որ
կարդան ի մէջ գրերոյն: — (14) Այսպէս Ե՛ իսկ Ս・Կ Այս գոհար վարդ
ծաղիկ: (15) Ե՛ ինքն կարմիր: — (16) Ե՛ վերա: — (17) Ս・Կ՝ թիփին,
գեղեցիկ է: — (18) Այսպէս Ե՛ իսկ Ս・Կ՝ ծառովն: — (19) Ե՛ Ամէն թուփ
գուն մը կը ծաղկի: — (20) Այսպէս Ե՛ իսկ Ս・Կ՝ մարդ կումայլի:
— (21) Ե՛ Այս արքայիկ: — (22) Ս・Կ՝ է թագաւոր: — (23) Ս・Կ՝ ինքն
սպիտակ որպէս զձիւն: — (24) Ե՛ իմաստութեան: — (25) Ե՛ եւ զօրու-
թեամբ կ'առնէ հըլուն: — (26) Տողք 127-134 են ըստ օրինակին Եա-
զընեանի: Առ Սրուանձտեանցի է հինգ տող, եւ խառնակ.

Սալածորցի սարկաւագ որը Դաւիթն եմ անգէտ գրոց բաներուն:

Կեանքս նման ծաղիկներուն, որ կը բացուի առաւօտուն եւ չորանայ
մինչ իրիկուն:

Շատ գատեցայ թէ գլուխն առնում ծաղկներուն.

Մաղկունք որ վարդ են աշխարհիս: օրինակ երկնից աստղերուն:

Սակաւ ծաղկունք գովեցի: բազումն մնաց վարպետներուն:

*Տողք 117-134 չկան ի Մեղուի:

Մաղկունքըն զոր դու ես գովել՝ (1) օրինակ երկնից աստղերուն.

Քանի՞ դատիս ի հետ մեղաց. կու նըմանիս նանիր ծաղկուն,

ԱՅՍՈ Առաւտուն ցանեն՝ բուսնի ծաղկի, չորնայ մինչ յիրիկուն:

Իհւ (2) Դաւիթն եմ: շատ դատեցայ՝ զըլուին առնում (3) ծաղկը-
ներուն.

Սակաւ ծաղկունքն ես եմ գովել (1), բազում մընաց վարպետներուն:
Երկիրըս Արզրում կ'ասեն, Սալածոր գեղս իմ օթեւան.

Ով ոք որ մէկ «Հայր մեր» ասէ՝ լինի Աստուծոյ սիրական:

* *

Քննութիւն անուանց ծաղկանց

յիշատակելոց ի Դաւթէ Սալաճուեցոյ.

1. Ա. խ ն ձ ո ր. տող 66. «Հօրօս Մօրօս... խառնուել հետ
Ախլայիսնծորուն»: = Այս բառ կը գտնուի եւ ի Բժշկարանս Խ ա լ ի ա յ
խ ն ծ ո ր գրուած, եւ իբր հոմանիշ Զիւնածաղկի: Նոր Հայկազեանն կ'ը-
սէ ի բառն Զիւնածաղկի. «Խակ ի Բժշկարանս եւ ի Հին Բառդիրս՝ Զիւն-
ածաղկն եւ Զնծաղկիտակն մեկնի բառիւքս այսոքիւք. Սորընջան, Սիւ-
րիսնձան, Մախմուր չիչէկի, Հիւզպէ, Խըլպուզ, Խ ա լ ի ա յ
խ ն ծ ո ր: Ի սոսին բերի կոչեցեալն յայլոց Կողքիսեան ծաղկի. զի Մե-
նինսքի ունի այսպէս. Colchicum, Colchicus flos, Մախմուր յիշէկի,
Հիւզպէ. Colchicum ephemerum, Hermodactylus, Այւրիւնձան»: Զիւ-
նածաղկի տրուած միւս վերոյիերեալ անուններէն՝ Խլօպուզ (հայերէն) եւ
Հիւզպէ (պարսկերէն): կը հաստատուին յաջորդօքդ. «Խլօպուզ. Զիւնա-
ծաղկի»: Հ. Մկրտիչ Անանեան, Բոլ. յԱշխարհաբառէ ի Գրաբառն. —
«Հիւզպէ. Զիւնածաղկի. է ծաղկի ինչ վայրենի. թուրքերէն Զիկսէմ յի-
շէկի»: Գէորգ Տէր Ցովհաննէսեան, Բոգ. Պրս.-Հայ. : Խսկ Յովհ. Աթա-
նասեանց, Երեւանի նահանջի Բուսականութիւնը, տպ. Երեւան, 1881,
երես 66. կը զանազանէ զնծաղկի եւ զիլոպուզ բայց չի նկարագրեր
ո՛չ զմին եւ ո՛չ զմիւսն:

Ցայլեւայլ հաւաքմունս Գաւառական բառից դատած եմ որ Ա. խ ն ձ ո ր
խ ն ծ ո ր եւ Զիւնածաղկի մի նոյն ծաղկին է. «Ըստ Կարմիրքցոց
Խ ա լ ա խ ն ծ ո ր՝ է ըստ Խոտրշրեցոց Զնածաղկի», կը գրէ մէկն.
(տես եւ Հայրուսակ, 31). — «Ա. խ ն ծ ո ր ըստ Ալաշկերտցոց՝ թը-
զաշափ բոյս մի է անուշանուռ եւ դեղին ծաղկով»: Հայրուսակ, երես

(1) Ե՞ գովեր: — (2) Ա՞ որք: — (3) Այսպէս Ս. իսկ Ե՞ առնեմ:

675. Թիւ 31. Խաչիայ խնծոր Բժշկարանաց չկայ ի Հայրուսակին. — «Ա խլախնձոր (գտանի) ի Բասենն» . այսչափ միայն Հ. Պուկաս Խնճիճեան, Նոր Հայաստան. 38 : Որովհետեւ Զիւնածաղիկին՝ ըստ Սաւածորեցւոյ ձեռանց հալելուն պէս կը ծաղկի (տող 35) եւ Ախլախնձորն որից կը յիշատակուի (տող 66). երկու ծաղիկներդ չեն ուրեմն նոյնանշան . կամ թերեւս Սալածորեցին երկու անուամբք զմի եւ նոյն ծաղիկըն ուզած է նշանակել . համեմատէ զիւր ըսածն՝ թէ «Հօրօս Մօրօս խառնուել հետ Ախլախնձորն» , ընդ հետեւեալ բանս Կոստանդնիքնի երգնկացւոյ, ի Տաղին «Այսաւը եղեւ պայծառ գարուն» .

Ահա գընան խընդիր Հօրօս Մօրօս ու Չունծաղիին,

Ու զըրկեն թէզ եւ ձէնեն զնուշանն որ է ի մէջ դաշտին :

Զիւնածաղկին է գլ. Colchique բուսոյ մի տեսակն, եւ թուփ բուսաբանից *Colchicum variegatum* կոչածն, որոյ արմատն յատուկ բառիւ կը կոչուի գլ. Hermadacte (= Հերմեսի մատն, ո՛չ թէ Որմզդի՝ ինչպէս ունի Հայրուսակին, 1779-82) . այս Hermadacte է զոր մեր Բժշկարանք կ'անուանեն Զիւնածաղկի տակ, արարերէն Սիրիկնամ : Անտարակոյս Զիւնածաղկին է զոր իրն էլ-Բէյտար (գլ. Թրգմ. L. Leclerc, Հ. Բ. թիւ 1345) կը կոչէ արարերէն *Chenbelid* . Fleur de Colchique . C'est la fleur du Sourrendjan, ayant la couleur de la Rose et la forme d'un petit Lys ou plutôt la forme même du Safran. Dans son développement, elle atteint les dimensions d'une fleur moyenne d'Amande amère, tenant le milieu entre le rouge et le blanc. C'est la première fleur qui apparaît dès que tombent les pluies du printemps . Son odeur est pénétrante . — «Ճենպէլիյս, Ճենպէլիյր . Մաղիկ իմն գեղնագոյն, որ ըստ ձեւոյն եւ ըստ հոտոյն նման է ծաղկան թուրնջի, եւ եթէ հոտոտիցի՝ փարատէ զգլխացաւութիւնն» . Գէորգ . (Հայրուսակին, 1779-82, սխալ կ'իմանայ «Ճանպալիթ = Շահարալուտ, Բալուտ» . եւ 2281, «Ճանպալիթ = Շան Բալուտ» :) Խնճիճեան, Նոր Հայաստան, 38, այսպէս կը նկարագրէ զջ իւնածաղկի . «Զնծաղիկ, որ վասն զի յետ լուծանելոյ ձեան իսկ եւ իսկ ծաղկի, յայն սակս կոչեցաւ յայս անուն . ի զործ ածեն ի գեղորայս, որ փարատիչ է տագնապոյ եւ այլոց ցաւոց : Տերեւք սորա խիտ առ խիտ սփռեալ են զերեսօք գետնի . ծիղ նորա թզաշափ՝ ունի ի գլուխ իւր ծաղիկ փոքր, ոմանք սպիտակ, եւ ոմանք ի զոյն Մանուշակի . «սպիտակ, գեղին եւ կապոյտ» . Նոր Հայկը. ի Զիւնածաղիկ . տեւէ զաւուրս չորս կամ հինգ . ունի սոխ (գլ. bulbe) փոքր կաղնաչափ» : Կայ գլ. Nivéole printanière (ի լատինականէն Nix, nivis, Զիւն), *Leucojum vernum*, Nivéole d'été, *Leucojum aestivum* եւ Nivéole d'hiver, որ եւ Perce-neige, *Galanthus nivalis*. ա՛յլ է եւ Boule-de-neige, թուրք. Գար թօփու :

Զոյդ ընդ Զիւնածաղիկ կը յիշատակէ Սալածորեցին (տող 35) եւ Զիգիտամ, Բարդ, Խաժուակ, չորեքեան եւս նախարոյս գարնանային ծա-

զիկք : Զիգիտամ (սխալ է Զրիկտամ ի Ս եւ Կ) է թուրքերէն Զիկտէն չիւ յիկի = Զիւնածաղիկ ըստ Գէորգայ . բայց ծաղկերգուն թուրի թէ Զիւնածաղիկ տեսակ մի կ'իմանայ . Ա՛յլ է «Աշնան Զիկտամ» Ամիրտառվաթայ, որ եւ Դեղին Շուշան, գդ. Հéminérocalle (եւ ո՛չ Amaryllis, ինչպէս ուսիւալ կ'իմանայ Հայրուսակն, 2357, 2706 . տես Իրն էլ-Բէյտար, Հ . Ա . 209) : Ա՛յլ է դարձեալ նորին Ամիրտառվաթայ «Քէլիլի Զիկտամի», որ եւ Դուզդուն զըլմձը, Կարմիր Շուշան, գդ. Glaieul, (Հայրուսակ, 5) :

Յ . Ա . Կ ա ն ջ ո ւ կ . (ռամկօրէն Ա . Կ ն ջ ո ւ կ .) տող 85, ԱԱԿնջուկն ու Գառինդմակն : = Գառինդմակ, կամ ըստ Բժշկարանաց՝ Գառնադմակ, է գդ. Grande Joubarbe . որոյ փոքր տեսակն կը կոչուի Գառնադմակիկ . գդ. Petite Joubarbe, Orpin blanc . թուրքերէն՝ Գուլագ օրու = Գառնադմակիկ (Հ . Յակոբոս Պօզմանեան, Բոգ. Տաճկ. — Հայ.) : Ակն ջ ո ւ կ = Գուլագ օրու = Գառնադմակիկ է ուրեմն ուղիղն ըստ Մրուանձտեանցի օրինակին, (ո՛չ թէ Ակնտակ, Ակն եւ տունկ, Ակնեւտուկ) . մանաւանդ զի կայ եւ ի Բժշկարանի . «ԶԱ. Կ ն ջ ո ւ կ խոռն քաղէ եւ չորացո եւ լեսէ» . Հայրուսակ, 40 : Նոյն է անտարակոյս եւ Ա կ ա ն ջ ա խոտ, բառական թարգմանութիւն թուրքերէնին Գուլագ օրու, որ «ի լրոյ եւ ոչ գրոց հանդիպուած» է, կ'ըսէ Հայրուսակն, 39 : Ա՛յլ ինչ թուի Ա կ ա ն ո ւ կ, Հայրուսակ, 38 . գդ. Acanthe?

Աղբրանց արիւն, Աղբրանց արիւն : տես Եօթնազքօր արիւն :

Յ . Ա . Ա ն թ ա ռ ա մ ծ ա ղ ի կ . տող 444, «ամառ ձմեռ չի չորանալ» : = «Ա . Ա ն թ ա ռ ա մ ծ ա ղ ի կ (տպ. ծառիկ) . վայրի ծաղիկ յատուկ այս անուամբ, որ բուսանի անջրգին վայրեր, խիստ անուշահոտ, նարինջ եւ ղեղին զունով» . Մրուանձտեանց, Մանանայ, 444 : Տփզիսեցի բժիշկն Մտեփանոս Շահրիմանեան յիւր Տնկարանութեան Բառարանին կը գրէ . «Ա . Ա ն թ ա ռ ա մ ծ ա ղ ի կ . լո . Helichrysum . թուրք. Ալրուն Պաշը» : Գդ. Immortelle jaune կամ Éternelle jaune ծաղիկն՝ ըստ արդի բուսարանից կը կոչուի Helichrysum orientale .

Դիտողութիւն . — Ի Մալաձորեցւոյ յիշատակեալ չորս ծաղիկք, Անաթառամ ծաղիկ, Աւգեր ծաղիկ, Կոկոռոչ (Քոքոսող), Մեղրիկ ծաղիկ, կը գտնուին եւ Մշակ լրազրի ֆլը տարւոյն 88 թուոյն մէջ . (տես Հայրուսակ, 104, 249, 3223, 2049) . Ո՞ր է Մշակի ֆլը տարին . 1890, թէ ա՛յլ տարի, չդիտեմ, թուի թէ Մշակի նոյն թուոյն մէջ յօդուած մի կայ՝ յուրում ի Մրուանձտեանցի Համով-Հոտովէն առնուած են բառքդ . (Աւգեր ծաղիկ, Քոքոսող, եւ Զնարեր — զորմէ ի ստորեւ — զայն կը յայտնին : Փափագելի էր որ Հ : Ալիշան փոխանակ «ԺԼ»՝ դնէր զտարի Մշակին, փոխանակ պարզապէս նշանակելու «Մշակ, ֆլ., 88»՝ ընդօրինակէր դհա-

տուած լրագրին . զի յ՝ Ասթառամ ծաղիկ, 104, կ'ըսէ թէ այս ծաղիկ, դեղին գունով՝ ըստ Սրուանձտեանցի, կ'ըլլայ նա եւ «կարմիր գունով, Մշակ, ժԷ. 88» . թերեւս Մշակի յօդուածաղիրն Աւգեր ծաղիկ, Մեղրիկ ծաղիկ եւ Քոքոռչի մասին ալ ծանօթութիւն տուած է (1) . — Հայրուսակն կը գրէ դարձեալ . «1790 . Զնաբեր? Յիշուած է յօրագրի (Մշակ, ժԷ. 88) : Հ . Ալիշան չէ իմացած որ յօդուածաղիր լրագրիդ առած է զայդ կարծեցեալ ծաղիկ անուն ի Սալածորեցւոյ, ըստ հրատարակութեան Սրուանձտեանցի, տող 42 .

Զուրն ու չայիր չիման ծաղկունք ցնծան ի հետ ձնաբերոյն . որ ի հրատակութեան Մեղրուի նոյնպէս սխալ է «որ ցնծան հետ ձնաբերնուն» : Ուղիղն է ըստ Եազըճեանի օրինակին՝

Զուրն չայիրն չիման ծաղկունք կու ցնծան յետ ձնաբերնուն .

Սալածորեցին ըսել կ'ուզէ՝ թէ Յետ ձիւսաբերից կը ցնծան ծաղիկներն ի ջուրս եւ ի մարդագետինս :

Այսպէս սխալ է եւ Զամպ ծաղիկ, իբր թէ յիշատակեալ ի Սալածորեցւոյ . սա կ'ըսէ ի 40 տողին .

Յետոյ Բերդոչն ու Կոկոռոչն կու Զահառին ի յետ զամպուն .

Ինչպէս երկու տող ետքը կ'ըսէ՝ ի յետ ձընաբերնուն : «Զամպ» կը Կոչեն Խոսրջրեցիք մինչեւ ցայսօր Լեռներու վերայ գիզուած ձիւնն . ծաղկերգունին ըսածն է՝ թէ իսկ եւ իսկ ընդ հալել լեռներու ձեանց (= ի յետ զամպուն) կը պայծառանան Բերդոչն ու Կոկոռոչն . սխալ է յամննայն օրինակս «ի հետ զամպուն» : Հ . Ալիշան, Հայրուսակ, 695, թէպէտ եւ գիտէ որ «Զամպ նշանակէ մնացորդ ձեան լերանց վրայ», համայն եւ այնպէս կը նշանակէ «Զամպ» իբր անուն բուսոյ, «ի հետ Զամպուն» : Ոչ ինչ ընդհատ սխալ է նա եւ «Բէջար կամ Բէջար, անուշանոտ ծաղիկ»: իբր ի Սալածորեցւոյ, Հայրուսակ, 343 . տես Բէջարէ ի Մեկնութեան բառից Սալածորեցւոյն : Կայ եւ Օրօն ի 62 տողի Տաղիս. զոր զզ. Գունէ կոչէ Հայրուսակն, 3258, 2528, եւ 565, ծան. 2, առանց բերելոյ վկայութիւն ի Սալածորեցւոյ . տես Օրօն ի Մեկնութեան բառից ծաղկերգուիս :

? 4 . Առուեզդ, կամ թերեւս Առուեզդներ . տող 56, «Աւագեր ծաղիկն ու Մամխոպոպ կու բացուին հետ Առուեզներուն», զոր Ս . Կ . կը գրեն «հետ առուեզերուն» : == Անծանօթ . Թերեւս յ՝ Առու բառէ բարդուած բառ մի է, նման Առուի Դաղձն, Առուի Կարոս, Առուի Ռահան անուանց բուսոց : Մարթէը կարծել թէ Աւգեր ծաղիկն եւ Մամխո-

(1) Եթէ բարեսէր ոմն հաճի յղել ինձ զՄշակի ժԷ. 88 համարն, շատ չնորհակալ կ'ըլլամ, եւ անյապաղ յետ կը զարձընեմ : — Թերեւս ի նոյն Մշակէ է եւ Մոճիկ ուտելի արմատն, Հայրուսակ, 2135, ուր կը նշանակուի «Մշակ, լ . [ժԷ. ?] 88» :

պոպ կը բացուին յեզերս առուաց, «հետ առուեզերուն»։ բայց հետ չե՞ց յարմարիր, ինչպէս եւ ոչ յետ։

5. Ա ս պ ո ւ զ ա ն։ (Խանդարմամբ Ասքօսան։ իսկ Սապուսան, Կոխալ է։) տող 109, «իսկի (=բնաւ) վար չի գալ լեռներուն, վառ կապոյտ է, հոտն սակաւ, արմատըն դեղ է եղներուն (=եղջերուներուն)»։ = **Պղ.** Soldanelle կը կոչուի, ըստ Բառարանին Գաղղիական Ակաղիմբայ։ Une très jolie petite plante à fleurs bleues, qui croit sur le sommet de nos plus hautes montagnes, auprès des neiges et des glaciers. Կամաձայն երկու մասամբք Ա ս պ ո ւ զ ա ն ի նկարագրին ի Սալածորեցւոյ։ 1. վառ կապոյտ է։ 2. իսկի վար չի գալ լեռներուն։ այս պատճառա։ «Soldanelle. Ասպուզան» դրած եմ յիմ Գաղղ. - Հայ. Բառագիրս, առաջին նշանակութիւն (1)։ ուզի՞ղ թէ սիալ, չգիտեմ։ Մաղկիս անունն շատ հին է մեր լեզուին մէջ, եւ զոյգ ընդ Հաւրուտ եւ Մաւրուտ (Հօրօս Մօրօս), Ուսկեծաղիկ եւ ծինկ, զորս կը յիշատակէ նմանապէս Սալածորեցին, կ'ենէ մինչեւ յևսկեղար մեր գրականութեան։ տես Ա ս պ ո ւ զ ա ն յԱգաթանգեղ, 480. ուր գրեալ է ասպազան, եւ զորմէ արդէն խօսած եմ յիմ Հայկական Բառայիննուրեան, երեսք 3, 127։ Գիտէ զայն յ'ժ՛ գարու եւ Մխիթար Գոշ, Առակը, I. 36, իբր ւլեռնական ծաղիկ։ Կը յիշուի եւ յայլեւայլ Բժշկարանս, Ա ս պ ո ւ զ ա ն, Ա ս պ ո ւ զ ա ն ո ւ կ, անծանօթ կամ երկրայական օտար հոմանիշներով։ Կարեւոր տեղեկութիւն մի կու տայ Յովհաննէս Երզնկացի յիւր Մեկնութեան Քերականին։ «Նա եւ ի ծաղկիս զՎարդ, զՄերուշան, զԱ ս պ ո ւ զ ա ն արական ասացին։ եւ զՇուշան եւ զՄանիշակն իգական»։ Նոր Հայկազեան, ի բառն Մերուշան, Հայրուսակն, 2053, Համամ Վարդապետի Մեկնութեանն Քերականի կը վերագրէ զվկայութիւնդ, բայց հետաքրքրուած չէ թէ յո՛վ կ'ակնարկէ «ասացին», յորում լեզուի արական սեռ ունի Վարդ, իսկ Շուշան եւ Մանիշակ՝ իգական։ յունարէն լեզուի մէջ երեքեանդ եւս չէզոք հն։ Մեծապէս չնորհակալ կ'ըլլամ եթէ բարեսէր ոմն հաղորդէ ինձ լրիւ զկրնատեալ վկայութիւնդ Երզնկացւոյ կամ Համամայ Մեկնութեանն Քերականի, որպէս զի հասու ըլլամ թէ ո՛յք ոմանք «զՎարդ՝ արական ասացին, եւ զՇուշան եւ զՄանիշակն՝ իգական»։ այսու թերեւս յաջողի ինձ գտնել զատոյդ նշանակութիւն գեղեցկանուն Ա ս պ ո ւ զ ա ն եւ Մերուշան ծաղկանց՝ որ արական կ'ըսուին։

6. Ա ւ գ ե ր, կամ Ա ւ գ ե ր ծ ա ղ ի կ. (Այափիր, Մ. = Այաքիր ? = Աւաքեր ?) տող 56, «Աւգեր ծաղիկն ու Մամխոպոպ կու բացուին

(1) Յօրինակին Եազըճեանի՝ փոխանակ «արմատն դեղ է եղներուն» բառ հրատարակութեան Մրուանձտեանցի՝ գրուած է «ի սահանդ եղեր է իղներուն»։ զոր յիմ Գաղղ. - Հայ. Բառագիրս կարծած եմ «ի մահաղեղ (=թոյն) է եղներուն»։ Մեղուի օրինակն ունի «օք ու սահաթ է եղներուն (տպ. եղներուն)»։

Հետ Առուելղներուն : = Անծանօթ : Արդեօք յանուանէ՞ ծաղկիս է Աւղերեան մականունն՝ զոր անմահացուցած է Հ. Մկրտիչ վարդապետն Մըխիթարեան : Նշանակեմ որ պարսկերէն էկիկեար — (որու նման կը հնչէ Աւագեր) է Անդամալոյծ, ըստ Գէորգայ : Հայրուսակն, 3279, կը յիշէ Անդամալուծի ծաղիկ, եւ կը յղէ ի Սամսար ծաղիկ, 2697, ուր կը գրուի Անդամալուծի խոռու : — Տես զիմ Դիտողութիւն յ'Անդամամ ծաղիկ, նկատմամբ Աւգեր ծաղիկ յիշատակութեանն ի Մշակ լրագրի :

Պ. Բալասան ծաղիկ . տող 117, սուրբ մեռոնին մակարդն է» : = Բալասան, արաբերէն Պէլիսան. է անուշահոտ հոյզ (գլ. substance résineuse) որ կը ծորէ ի ծառոյ, եւ ըստ մեր հին մատենագրաց կը կոչուի Ապրասամ, Ապրասմ, եւ յունարէն բառիւ Բաղսամոն, Վաղսամ, գլ. Baumier . ծառն, որ կը բուսնի մասնաւորապէս յերջանիկն Արաբիա, ի Հրէաստան եւ յԵգիպտոս, կը կոչուի Բաղսամոս ծառ (Բրս. Վեցաւեայ, Ե. 101), ի Ստորին Հայերէնի՝ Բալասանի տունկ, Բալասենի, եւ Մեռոնի ծառ (տես զվերջինս ի Հայրուսակ, 280), գլ. Baumier . Բայց նոյնպէս Բալասենի կը կոչուի եւ Նարդոս ծաղիկն, գլ. Nard . տես «Նարդոս» որ է Բալասենի», Գիրք Աղամայ, հրատ. ի Թանգարան Հին եւ Նոր Նախնեաց, Ա. տպ. Ս. Ղազար, 1896, երես 14, եւ ծան. 10 : Բալասան ծաղիկն, մակարդ սուրբ մեռոնի», յայտնի է թէ չէ գլ. Baumier ծառն, այլ կամ նարդոս է, կամ տեսակ նարդոսի . (Մալաձորեցին, տող 106, որի կը յիշէ «Նարդոս ծաղիկն ու Կինամոն») : Համեմատէ ընդ նարդոս = Բալասենի զհետեւեալդ . «Աստուածային» եւ մեծ մարդարէն Մովսէս . . . առեալ զեւթնարփեան ծաղիկն, զեղէգն (տպ. զեօթընարփեան ծաղիկն՝ զեղէգն), զիինամոնն, Զմուռն, զնարդուի կամ ամասափիւռն, եւ եփեաց զնա իւղ աստուածային» . Պատմութիւն սուրբ եւ աստուածային իւղոյն (թարգմանեալ յԱղուանից լեզուէ ի հայ) . Տաշեան, Ցուցակ Հայ. 22 Միսիր. Վիեննայ, երես 659 ա., թիւ 6 . (նոյն Պատմութիւն է եւ ի Հայրուսակին, 666 .) ուր ի գիրս Ելլից, լ. 23-24, կը կարդանք «ծաղիկ Զմըռնենեաց (= Զմուռ), Կինամոնն (= Կինամոն), Խունիեղէգն (= Եղէգն), Հիրիկ (= Եւթնարփեան ծաղիկ), իւղ ի Զիթենեաց» : Գլ. Balsamite կամ Tanaisie Balsamite, Tanacatum Balsamita, կը կոչուի գեղնածաղիկ, սասակահոտ եւ դառնահամ բոյս մի . Իբն Էլ-Բէյտար (Հ. Ա. 190) կը խօսի Ahlal kosti հոտաւէս բուսոյ մի վերայ, զոր գաղղիացի թարգմանն L. Leclerc կը կոչէ Tanacetum Balsamita . — Նոյն է արդեօք Բալասան ծաղիկի հետ աՄեռն ծաղիկն որ կը գտնուի ի Խզու ի նահանգին Տիբրպէքիրի (Խնձիճեան, Նոր Հայաստան. 38, 232) : Սասնեցիք զմին ի ծաղկանց մեռոնի կ'անուանեն «Հրուկ ծաղիկ», որ եօթնագոյն է կ'ըստու (Հայրուսակ, 1757), եւ պնչուշտ նոյն է ընդ «Եւթնարփեան ծաղիկ = Հիրիկ» : Կայ եւ պարսկե-

բէն ռՀեգիքէնկ (=Եւթներանդ) . ծաղիկ ինչ եօթներանդ, որ յատուկ է դաւառին Հնդկաստանի . իսկ ըստ մեկնութեան ուրումն՝ ծաղիկ ինչ, որ ասի պարսկերէն Պէնէգէ՛ ի խայրի» . Գէորգ : Սա ինքն կը նոյնացընէ զիայրի, Հիյրի ընդ նեպպույ, զոր մեք այժմ կը կոչենք Շահպարակ, գղ. Girofle, բազմազդի ծաղկներով բոյս մի, սպիտակ, կարմիր, գեղին, մանուշակագոյն, խառնուածոյ կամ խայտ (panaché) . «ո՛րն սպիտակ, ո՛րն դեղին, ո՛րն կարմիր, ո՛րն խայտ (տպ. խոտ), ո՛րն ծիրանի», կ'ըսէ Ամիրտոլվաթ (Հայրուսկ, 426, 2257) :

8. Բ ա ր դ (կամ Բարթ . իսկ Բարի, Եւ Եւ Հայրուսկ, 324, սխալ գրեալ թուի՝ փոխանակ Բարթ) . տող 35, մի ի չորից նախաբոյս գարնանային ծաղկանց . միւս երեքն են Զիւնածաղիկ, Զիգիտաև, Խաժուակ : ==Անձանօթ . Թերեւս չէ հայ բառ, ինչպէս կընայ կարծուիլ ի Բարդիսապահ ծաղկի անունէն՝ որ պարսիկ - արաբացի կը հնչէ, Բաւ դի - ստապահ . (համեմատէ ընդ Գուլիսապահ — Գուլիսապահ, թիւ 92+) . «Բարդիսապահ . ծաղիկ պայծառ եւ անուշանոտ, մշակեալ» . Սրուանձտեանց, Մանանայ, 442 : Հայրուսկն չունի Բարդիսապահ : — Ի գարնան կանուխ ծաղկող բուսոց տոհմն գղ. Primulacées կը կոչուի . այս տոհմիս կը պատկանին Primenevère (Կովացնծուկ կամ Կովացնծու՝ ըստ Արցախեցւոց, ինչպէս կ'աւանդէ Սա. Շահրիմանեան), . Oreille-d'ours (Քինարբու կամ Գնարբուկ . տես ի թիւ 15, Գինարբ), Soldanelle (Ասպուզան . տես թիւ 5), Gyroselle, Cyclamen (Արջտակ), այլովքն հանդերձ :

9. Բ ա ր ձ ու ե ն ե ա կ . տող 75, «գոյնն է պակաս, հոտիկն աւնուշ, քան զամէնն խոնարհ կենայ, կու բուսնի ծաղկունաց հեռուն» : ==Յայտնի է ի Փաղիանոսի Բառից եւ ի Բժշկարանաց՝ որ Բ ա ր ձ ու ե ն ե ա կն է գղ. Aurone, թուրք. Այլարօնա, Գօյուն օրու : Լիտրէ ի բառն Aurone ի մէջ կը բնրէ վկայութիւն մի յ՛ժԴ գարէ . «Abroigne [=Aurone], une herbe qui bone est au toutou» . զոր համեմատէ ընդ Գօյուն օրու ==Ոչխարի խոտ :

10. Բ ե ր դ օ չ . տող 40, «Բերդոչն ու Կոկոռոչն կու ջահառին ի յետ զամպուն», այս ինքն՝ կը պայծառանան ի հալել լիւներու ձեանց . (տես յ՛Անթառամ ծաղիկ :) ==Անձանօթ : Թուի լեռնական ծաղիկ, հանդոյն Ասպուզանի : Կարապեա Սասնացի, ի Ներբողենի Մրբոյն Մեսրոպայ, տպ. Վաղարշապատ, 1897, երես 59, կը կոչէ զՍուրբն «Բազէ արագաթուիչ, բու մահու մեղաց, բըրդաւշ կեփաղէ [=կեփաղեայ ==ոսկեղէն], բուծող հոգւոց, բազմակ Սիրնի» : Եթէ մի եւ նոյն է Բըրդաւշ ու Բ ե ր դ օ չ, ապա Բ ե ր դ օ չ՝ ոսկեւոյ նման զեղին ծաղիկներով բոյս մի է : Սառնացոյ բըրդաւշն է որ նախամեծար ընել տուաւ ինձ զԲ ե ր դ օ չ (Ս եւ Կ) քան զԲաքոօշ (Եւ Հայրուսկ, 327, 695) եւ զԲանբուշ (Ե՛) :

12. *Բուրազան* (կամ՝ *Բուրազան*, *Բուրաստան*, *Բօզան*) • տող 115 : = Անծանօթ : Խանգարեալ են տողքն 115-116, ուր կ'ըսուի ծաղկիս համար «վարդ, է շարել հետ բանգերուն» (կամ՝ իւր պատկերուն, կամ՝ հետ խնկերուն), Կարմիր խնձոր թաղաւորաց, ոսկի բուրվառ խնկով լեցուն (կամ՝ է խնկենոյն, կամ՝ հետ խնկերուն») :

13. *Բը արիոն* • տող 86, «Մուրտն ու Շուշան ու Բրաբիոն՝ հասրաթ (= կարօտ) են թէ զիրար տեսնուն» : = Տեսակ մի Շուշան, ըստ ոմանց՝ Սպիտակ Շուշան (Հայրուսակ, 389) • Թուրքերէն Թէպէր, ըստ նոր Հայկազենի եւ Պօզանեանի : Հ. Մանուէլ Զախշախեան կը գըէ յիւր Խտալերէն-Հայերէն Բառարանին. «Tuberoso • ծաղիկ ինչ սպիտակ եւ հոտաէտ. Թէպէր» : Նոյն է եւ գղ. Tuberéuse, «Բրաբիոն • Հօրուտ եւ Մօրուտ. Թէպէր» : Հ. Սրապիոն Էմինեան, Բող. Գաղղ. -Հայ. :

14. *Գամուտաշչ* • տող 83, «Մաղկել արտերուն» մէջ՝ զոյդ ընդ Զատր ծաղկի (գղ. Liseron des champs) եւ Կոճակի : = «Գամուտաշչ. խոտ, եւ ծաղիկ նորա, է՛ որ գորշ, եւ է՛ որ կապոյտ թխագոյն» • Նոր Հայկազեան, ի Յաւելուածին, Աշխարհիկ [իմա՞ Գաւառի] բառք՝ անվկայր ի գրոց առ մեզ եղելոց : Այսու Կամօտաշ (Մ եւ Կ) կը նոյնանայ ընդ Գամուտաշ • իսկ Գամանտրաշ (Ե եւ Հայրուսակ, 404)՝ թուի աղաւաղութիւն : Կայ եւ Կմնտաշ (Հայրուսակ, 1432), տեսակ մի գղ. Sauge բուսոյ՝ ըստ Տրապիզոնեցւոց • Կայ եւ Տմնտաշ (Հայրուսակ, 2970), գղ. Lysimachie, ըստ նոյն Տրապիզոնեցւոց : Եթէ Գամուտաշ, Կմնտաշ եւ Տմնտաշ չեն նոյն, բայց գոնէ երկու յիսինքդ պէտք է նոյն ըլլան • իսկ Sauge եւ Lysimachie յայտ է թէ այլեւայլ բոյսք են :

15. *Գինարբ* • (անհարազատ է Գինէվարդ, Մ.) տող 101, «հուտըն է գովական, ծաղիկն փունջ փունջ» : = «Գինարբ • ծաղիկ է սպիտակ մանրիկ, ի փունջս հաւաքեալ» • այսպէս Հ. Եփրեմ Սեթեան յիւր Տնկարանական բառ (22 Մ. Ղալպարու), համաձայն Սալամորեցւոյ «ծաղիկն փունջ փունջ» : Խոկ Սրուանձտեանց՝ «Գինարբ • բարձրացողուն ծաղիկ անուշահոտ (= «հուտն է գովական») դեղնագոյն • աղնիւն գտանի ի Մուշ». Մանամայ, 443 :

Գինարբ ծաղիկի տեսակ է թերեւս եւ Գինարբու, Գնարբու, Գնարբուկ, Գիներփուկ, Քեներփիւկ, Բնարբուկ, գղ. Oreille-d'ours, որ է գարնանային ծաղիկ, Primula auricula ըստ Լինեի, «Գինարբու • ծաղիկ կապտակարմիր եւ անուշահոտ • աղնիւն գտանի ի Վարագ» • Սըրուանձտեանց, Մանամայ, 443 : — «Գինարբու • մանիչակաղոյն ծաղիկ մի է

ջրասէր»։ Դեւոնդ Վ. Փիրզալէմեան, Գաւառի Բառք։ — «Գնարբուկ»։ Կը յիշուի ի մասենին Գաղրախտնութիւն Վասպուրականի, 51։ 57։ — «Գինեւ փուկ կապուտափայլ ծաղիկ ։ աղնիւ եւ անուշահոտ է ծաղիկս այս քան զայլ ամենայն ծաղկունս լերին Վարագայ, զորմէ ասեն ոմանք թէ չգտանի յայլ ու բեք ։ սակայն մարմէ է գտանիւ ի Բիւրակնեան լերինս, կամ յայլ ջրաբուխ մարմանդավայրս»։ Խրիմեան Հայրիկ, Հրաւիրակ Աւարտահան։ — «Ինձեւ փիխի առաս ի Վարագ լեառն»։ Ինձինեան, Նոր Հայատան, 38։ որ եւ կը զրէ յերես 147։ «Էլինի յայս լեառն (Վարագայ) Մանուշակ, Թենեւրիփիխի որ է ծաղիկ կապուտադոյն եւ անուշահոտ յոյժ, նման ձեւոյ Շուշանի ։ յորոց ոմանք ի ներքոյ ծաղկին բերեն սպիտակ ինչ փոշի պատեալ շուրջանակի ։ զոր ժողովեալ բնակչացն՝ ի գործ ածեն ի գեղ ցաւոց եւ գիճութեան աշաց»։ — «Եթէ նա (Արխոնզոմ Յովհաննիսեանց) նայած լինէր Սնննենկովի Բոււսաբանական Բառարանը՝ նա կը տեսնէր որ հայ ժողովուրդն այդ բոյսը, (ոռուսերէն տառիւք) *Auricoula*, գլ. *Oreille-d'ours*, կոչում է Քնարբուկ (ոռուսերէն տառիւք) *Gnarbouk*—երես 272»։ Սա, Մայսասեանց, Քննագատութիւն Արխոնզոմ Յովհաննիսեանցի Ռուսերէն-Հայերէն Բառարանին՝ որ տպագրեալ է ի Տփղիս, 1888. (տես յԱրագս, 1889, Հ. Ա. 154.) — Հայրուսակն, 2312, կը զըրէ։ «Պատառոսուկ ։ ի նորոց հնարուած։ *Primula Auriculata* [Auricula ?], այսինքն Ականջաւոր թաւրինջակ»։

Գոհար Վարդ։ տես Սուսամբար, թիւ 102։

16. Գոճմեր։ (Գոջմեր, Ս. Գոջմէր, Կ. Կոճմեր, Ե. Կօչվէր, Մ. ուր սխալ է Կօչվէրունուն, փոխանակ Կօչվէրուն։) տող 73, «Խոընդատն ընկեր եղել հետ Գոճմերուն»։ = Անձանօթ։ Կայ ի Բժշկարանս Գոճամուրու (սեռական՝ Գոճամորի ։ Հայրուսակ, 174). Գուճամուրու, Գուճիմօրու, Գոճմօրու, Գոճամիրույ, Գոճմորուք, Կոճամիրու, Կոճամիրուս, իբր հոմանիշ գլ. *Mille-pertuis*, *Épithym* եւ *Tragopogon* կամ *Salsifis* բոււսոց, որ զանազան բոյսք են։ Սալամորեցւոյն Գոճմեր ծաղիկն չթուի նոյն ընդ Գոճամորու։ Հայրուսակն, 1466, կը գրէ Կոճեն, զորոյ յոգնականն կը կարծէ Կոճեն։

17. Գուգէլ։ տող 97, «ծաղիկ՝ որ դեղ է ամէն անբժիշկ ցաւերուն»։ = Կանգիտանամ։ Թերեւս նոյն է ընդ Կուգէլ, զոր կը նշանակէ Հայրուսակն, 1515, ի Բժշկարանէ։ «Խոտ մի կայ՝ Կուգէլ ասեն։ այնոր ջուրն յիրար խառնէ Լօշտակի եւ ձլի ջրոց հետ, դեղ մազի եւ մօրուաց՝ որ չթափին»։ Գուգէլ եւ Կուգէլ կը գործածուեն ուրիմն հաւասարապէս ի դեղորայս։ միտ գնելու է որ յետ Գուգէլ՝ Սալամորեցին կը յիշատակէ յ'98 տողին զՓեննայ (գլ. *Pivoine*) եւ զկօշ-

տակ, զորս «Աստուած գեղ տուել դարդերուն (= հիւանդութեանց)», ինչպէս եւ Բժշկարանն զոյդ կը յիշէ զկու գել՝ եւ զիօշտակ: Ես ընթերցած եմ Դուք է լ յ'Արեւելիսն Մամուլ: Կոստանեանցի գրածն Գուղիլթուիք: իսկ Հայրուսակն, 526, որոշակի Գուղիլք կը գրէ եւ նոյն կը համարի բնդ թուրքերէնին Կիւղիլ = Գեղեցիկ:

18. • Դուք վարդ: տող 90, «Վարդն ու Գուլվարդն ու Հազրէվարդ, երանի ծանր է Վարդերուն»: == Տեսակ միք Վարդի, որ թուի թէ սովին անուամբ ծանօթ է եւ այժմ ի կողմանս Սասնոյ, եւ ըստ ականա տեսի՝ ճիւղերն երեք երեք վարդ կը բերեն, զորս տեղացիք կը խարշեն եւ կը խմնն իրը քրանեցուցիչ գեղ (Հայրուսակ, 528, 1410): — Ինչպէս շատ ծաղկանց անուանք, Անթառամ, Մանուշակ, Նարդիս, Շուշան, Սուսամբար (տես զյետինս ի թիւ 102), Վարդ, այսպէս եւ Գուլվարդ գործածուած է իրը անուն կնոջ: տես ի Թորոս Աղբար Սրուանցտեանցի, Հ. Բ. 366: — ի Հանդէս Ամսօրեայ, 1890, երես 20 ա: որ նոյն է եւ ի Կամենից Հ. Ալիշանի, 182:

19. • Եզնծաղիկ (ըստ Ս եւ Ե), Եզան ծաղիկ (ըստ Մ եւ Կ): տող 49, «Է իսիստ զեղին, զոյնն է զունով քան զծիրանուն: անջրդի տեղ կու բուսնի, զուարձանայ ամուան չորոյն»: == Կ'անդիտանամ:

20. • Եղիք ակ: տող 81, «Սինձն, Երիցուկն ու Եղերդակն կու սպասեն Արեւորդուն: Նոցա երանի ուրիշ է, կու չրջին զօրն հետ արեւուն»: ==

Սինձնի երկու նշանակութիւն: 1. Պտուղ Սնձենի, Սնձնի կամ Սնձի ծառոյ, զդ: Azerolier, պտուղն Ազերոլ: թուրքերէն Հալլմարանը, պտուղն Հալլմար, յորմէ առնուած է միւս հայերէն անունն Ալլոճի, ծառն, եւ Ալլոճ՝ պտուղն: Ուրիշ Բժշկարան միք կը գրէ: «Սինձն, որ է Փշատն»: 2. Դեղնածաղիկ խոտ միք, զոր այսպէս կը նկարագրէ Ինձիճեան, Նոր Հայաստան, 40: «Սինձն, որոյ անցրեւք իրեւ մանրաթելք առկախեալք: ծաղիկն զեղնադոյն: զբուն սուրա, կամ որպէս կոչեն՝ զորձանն [զդ, tige, haimre] (1), առանց եփելոյ ուտեն, որոյ հիւթ զձեռս մածուցանէ: իսկ զեդ նորա խարշելովք: Ծովէ: Աթանասեանց, 76, Scorsoneira [զդ: Scorsonière] կը կոչէ զՍինձն: մինչդեռ ըստ Ինձիճեանի, անդ, 40, Scorsoneira է Գոզի: «Պազի, զոր այլազդիք կոչեն Սօնոյինա, նման Բողկոյ, տերեւովք նման վերնոյն (այս ինքն՝ Սինձն խոտոյ)»: թէ՛ Բժշկարանք եւ թէ՛ այլեւայլ արդի բուսագրողք՝ թուրքերէն էվլիիք, եկմլիիք, եմալիիք, ենիլիիք կը կոչեն զՍինձն: (տես էվլիիք, եմալիիք ի Հայրուսակ, 2753, 1247:.) Այս զեղնածաղիկ Սինձն թուի յիշատակեալն ի Սալամորեցւոյ:

(1) Յիմ Գաղղ.-Հայ. Բառադիրս սխալ է Էտամիւն = Որձայ: Լաւ եւս է սեպհականել Էտամիւն բառի զՍոէչ:

Երիցուկ է գղ. Camomille, որ կը կոչուի նա եւ Գետնախնածոր, Խնձորխոտ, Կուծուռուի :

Եղերդակ կը գտնուի եւ ի Ձերևանց Մխիթարուրքեան Մխիթարյան Հերացւոյ, մեջ 27, իբր Եղերդ, գղ. Chiesoré, իտալերէն Radicchio, յորմէ թուրքերէն Բաշիհան, արարերէն Հինդիպա, որոյ մի տեսակն ունի կապոյտ ծաղիկ, միւս տեսակն սպիտակ ծաղիկ (իբր էլ-Բէյտարի, Հ. Գ. 2263), «Հինդիպա». Եղերդակ է եւ ի Բառա Գաղիանոսի :

ԶԱ. • **Ե**րիցուկ • տող 81 : = Գղ. Camomille • տես յ'Եղերդակ :

ԶԵ. • **Ե**օթնազըր արիւն (Ե) • Եօթնեղօր արիւն (Մ) • Եօթնազըրանց արիւն (Ս եւ Կ) • տող 46, «Ղըրմըզ (== կարմիր) է Եօթնազըրօր արիւն» : = Սոյն անուանակոչութեան ծաղկիս՝ միայն առ Սալանորեցւոյ հանդիպած եմ: Թուրի թէ թուրքք եւս Եկիք գարեաշ զանը կը կոչեն, եւ թերեւս ի թուրքաց տեղեկացած է անուան ծաղկիս՝ անգղիացին Lord Curzon Robert, որ ի կէս ԺԹ դարու աչօք տեսած է ի կողմանս կարնոյ զ'Եօթնեղըր արիւն արիւնն եւ կ'ըսէ թէ քան զայն գեղեցկագոյն ծաղիկ կարելի չէ երեւակայել (Հայրուսակ, 53, երեսք 22, 24): Մեր ժամանակի հայ բանաստեղծն Սէյեադ (Պետրոս Մադաթեանց), Եղբօր արիւն կը կոչէ, որ նոյնպէս անսովորական անուն է:

Եղբօր արիւն կոչուող ծաղկից յայտնի է,

Որ Արէլը սպանուել ա Հայաստան . . .

Դոյնը կարմիր՝ միայն ունի չորս տերեւ:

Զեղ Մներեկ՝ հողից դուրս կու գայ վերեւ . . . »

Նոյնպէս ի շարի ծաղկանց երեւանի նահանգին Եղբօր արիւն կը գրէ Ցովին, Աթանասեանց, 67, որ եւ ամբողջապէս ի մէջ կը բերէ զբանաստեղծութիւնն Սէյեադի, 68-70:

Սանօթագոյն անուն ծաղկիս է Աղբերանց արիւն. Ինչպէս զբած է անզստին ի ԺԶ դարէ հանճարեղ բանաստեղծն նահապէտ Խառակոնիսեցի:

Ա՛յ իմ Աղբերանց արուն արիւն, յապառաժ քարըն կենաս գուն:

Աչերդ ուռնայի (1) նըման, ոչ ի քուն ես եւ ոչ արթուն:

տես Արխստակէս Վ. Տէվկանց, Հայերգ, տպ. Տփղիս, 1882 — 83, երես 43, վերջին տողք. զոր Հ. Ալիշան վարդապետն կարդացած է յայլում օրինակի:

Ա՛յ իմ Աղմերաց արուն՝ որ բուսար ի մէջ քարերուն:

Աչուրդ ի նարկիզ նըման, մէկն ի քուն ու մէկըն զարթուն:

(1) Զնանակութիւն բարիս չգիտեմ: Վանեցիք ունին «Հուռնի հրեղէն» (Առունի խրեղէն)» ասացուած մի՛ որ կը յիշեցընէ զարարականն Հուրի կամ Հիւրի: Յաւերժահարան: Անհիմն է Հուր ի հրեղին ստուգարանութիւնն Սրուանձտեանցի, Մանանյ, 426:

Հայրուսակ, երես 25 : Աղբերանց արիւն նա եւ ի ժողովրդական երգի Վանհցւոց .

Ա խպէրանց արուն մէնջ քեարերուն,
Ինչի՞ կու լաս կուց կուց արուն .

տես Արագ, 1898, գիրք Ա. երես 57 : Խակ Թորոս, ուրիշ Վանեցի բանաստեղծ մի, կը գրէ Աղբերանց արիւն (Հայերգ, 118) . սոյնապէս եւ Խնձիճեան, Նոր Հայստան, 147 : Ալինի (ի Վարագայ լերին) նաև Աղբերանց արիւն, որ է ծաղիկի խոնարհ եւ կարմրագոյն յոյժ « . իսկ յերես 38 եւ 174, Աղբերաց արիւն, որ սի մէջ քարանց բուսանի, եւ ի գործ ածեն ի զեղորայս » . — « Աղբերանց արիւն . արեան գոյն կարմիր, թաւիշի նման՝ երեք թերթէ ծաղիկ մը, որ քարերու մէջ կը բուսնի . անհօտ է . Սուշը շատ կը գանուի » . Սրուանձտեանց, Մանանայ, 441 : Հ. Եփրեմ Սեթեան յիւր Տնկարանական բառս կը գրէ նմանապէս Աղբերանց արիւն, եւ կ'ըսէ . « բուսանի յաղբերակունս, վասն այն ասեն Աղբերաց արիւն » . որ շատ կ'օտարանայ յ'Եղբօր արիւն ստուգաբանութենէն : Մագումն բառիս, ինչպէս կը տեսնուի, յայտնի չէ : Գերմանացին F. Buhse յամին 1849 տեսած է զԱղբերանց արիւն ի գաւառին Սիւնեաց, եւ կը կոչէ զայն Անորլանտուս Tournesfortii (Ալիշան, Այրարա, 30 թ) . իսկ M. Wagner կը կոչէ Անորլանտուս Bicecsteinii (Հայրուսակ, երես 25, ծան. 3) . այլք կոչած են Ravnica. եւ Thelippea coccinea (Հայրուսակ, երես 24) :

Այլ է Աղբերաց արիւն խէժն (գլ. résine) տեսակ մի Արմաւենոյ, խորին կարմիր եւ գրեթէ թխագոյն՝ որ փոշիանալով արեան պէս կարմիր գոյն կ'առնու : Այս խէժ կ'ըսուի գլ. Sang-de-dragon, կամ Sang-dragon, Արիւն վիշապի . քանզի առասպելական զրոյց մի կ'աւանդէ՝ որ վիշապն զիւր փորոտեաց տապն զովացընելու համար կը ծծէ զարիւն փղի, եւ երբ փիղն վիշապին վերայ իյնալով կը ճմէ զնա՝ վիշապն կը փսխէ զարիւնն զոր ծծած էր յերակաց փղին, եւ յայն արենէ կը բուսնի ծառն որ կու տայ զայս խէժ : Պարսիկք կը կոչեն Խունի Սիյավիւշ կամ Խունի Սիյավիւշն = Արիւն Սիյավիւշ (Շաւաշայ, Շաւարշայ ?) . քաջն Սիյավիւշ՝ Խյրանի Քէյքեալիւս (Կայկաւոր) թագաւորին որդին էր, զոր յերիտասարդութեան ժամանակին սպան ի տարապարտուց եֆրասիյապ թագաւորն Թուրքաց, եւ իրը թէ յարենէն Սիյավիւշի բուսաւ ծառ մի, ըստ ոմանց այն՝ որ կու տայ զվերոյգրեալ խէժն, ըստ այլոց՝ այն ծառ որ թուրքերէն կը կոչուի Պազաւ աղամը, գլ. Bois de Brésil, հայերէն Որդան փայտ . (տես ի Գէորգ Այիավիւշ եւ Խունի Սիյավիւշ,) Արաբացիք կ'ըսեն Տէմ իւր թիննին. Արիւն վիշապի . բայց սովորաբար՝ Տէմ իւլ ելսկիյն (իրն էլ-Բէյտար, Հ. Բ. 882), Արիւն երկուց եղբարց, թուրքերէն իիի գարտաշ զանը (Գէորգ, ի Խունի Սիյավիւշ) . Թուրքերէն կ'ըսուի նա եւ պարզապէս Գարտաշ զանը : Ի՞նչ պատճառաւ Արաբացիք զայս խէժ

«Արիւն երկուց եղբարց» կոչած են, կ'անպիտանամք. բայց շատ հաւանական է որ մեր Բժշկաբանաց «Աղրրաց արիւն»ն թարգմանութիւն է արաբականին Տէիլ իշխ կխիվիյն, թէպէտ զարմանալի է որ անդստին յ'մբ դարէ հայ բժշկապետք ռամկարանութեամբ և զ բ ը ա ց ա ր ի ւ ն ըստ ըլլան, փոխանակ Եղբարց արիւն։ Միխթար Հերացի կը գրէ, իբ ։ 45. «Ապա թէ այդ ջրերդ չի գտի, ... դու իւր փոխան՝ Փրփրեմի ջուր ա՛ու եւ Թրթհճի ջուր, եւ մատնեհար հոռոմ կաւ (գլ. terre sigillée), եւ Ա զ բ ը ա ց ա ր ի ւ ն, նշի ձէթ. զամէնն հաւաքէ եւ հոկնայ (կամ տկնոր) արա»։ Աստ խէժն է առանց տարակուսի, ինչպէս հասկացած է եւ Նոր Հայկազեանն յ'Աղբարց արիւն։ իսկ Հայրուսակն, 53, երես 26, զ Ա զ բ ե ր ա ն ց ա ր ի ւ ն ծաղիկն կ'իմանայ։ Տես Ա զ բ ը ա ց ա ր ի ւ ն ի նմին մատենի Միխթարայ, 150, ի շարի նուսխայիցն՝ որ գրեալք են յայլմէ. — «Դարաշյան [=Դամ իշխ ախեվիյն ?] եւ Խունի Սիյավիշան. Ա զ բ ը ա ց ա ր ի ւ ն»։ Բառք Գաղիանոսի. — «Ա զ բ է ր ա ր ու ն. լաղինն Սանկիս տրաֆօնիս [Sanguis draconis]»։ Ասար Սերաստացի (Հայրուսակ, 53, երես 22)։

23. Զ ա մ բ ի ւ զ, կամ Զ ա մ բ ի ւ զ ծ ա ղ ի կ. տող 105, «Է խիստ գունով, կարմիր պայծառագոյն»։ ։ = «Զ ա մ բ ե ղ ն, այդ եղեգնանման տերեւներով ծաղկաբոյսը, կարմրախառն գեղին գոյնով եւ մնծ բոլորակածեւ ծաղիկներ ունի, որոնք շատ սակաւ հոտ են արձակում իրանցից։ Բազմամեայ ծաղիկներից մէկը լինելով, նա ամենեւին երկիւղ չունի ցրտից, եւ գարունն սկսելիս՝ հին արմատի վերայ գուրա են գալիս նոր փարթամ թերթեր, եւ նորանց միջից արձակւում են առանց երկրորդական ոստերի ցօղուններ, որոնց գազաթներին բացուում են ծաղիկները»։ Յովհ. Աթանասեանց, 65 — 66։ Սալամորեցին կ'ըսէ թէ Զ ա մ բ ի ւ զ ծ ա ղ ի կն «Է խիստ գունով, կարմիր պայծառագոյն»։ որու գրեթէ համաձայն եւ Աթանասեանց, թէ Զ ա մ բ ե ղ ն է «կարմրախառն գեղին գոյնով»։ Ընթերցուածն «Է խիստ գունով» է ըստ Մ. ուր Ս եւ Կ ունին «հոտովն անուշ», եւ Ե՝ «հոտով անուշ»։ ընտրեցի զընթերցուածն Մեղուրի, քանզի ըստ Աթանասեանցի՝ Զ ա մ բ ե ղ ի ծ ա ղ ի կներն «շատ սակաւ հոտ են արձակում իրանցից»։ Արուանձաեանց. Սանանայ, 444, կը գրէ. «Զ ա մ բ ե ղ. Զ ա մ բ ի ւ զ ծ ա ղ ի կ. [թուրքերէն] Զիւմբիլը»։ Թերեւս փոխանակ գրելոյ Զիւմպիլ, զի թուր թէ թուրքերէն՝ Հայոց նման՝ Զիւմպիլ յիշէկի կ'անուանեն զայս ծաղիկ (Հայրուսակ, 693)։ իսկ արաբերէն Սիւմպիլ, զոր կը յիշէ եւ Սալամորեցին ի 46 տողին, Ամբուլ, է Յակիրնթ ծաղիկն, գլ. Jacinthie. Ա՛յլ է եւ Սիւմպիլի հինգի կամ Սիւմպիլի րումի, նարգոս ծաղիկ, գլ. Nard.

Հսեհան. տես Ռ ա հ ա ն :

24. Թորթ. տող 69, «Տուղան ու Թորթն ու Մեղրիկ ծաղիկն՝ նման են ծաղկած ծառերուն» :

Տուղտ է գաղզ. Guimauve, թուրք. Կիլիխարեմ:

Թորթ թուրի գղ. Oreanète (1). Buglossa des teinturiers, Anchusa tinctoria, ի տոհմէ գղ. Borraginées բուսոց. որոյ արմատն կարմիր ներկ կու տայ, Նոյն Borraginées տոհմին կը պատկանի նա եւ Եղնալեղուն, գղ. Buglosse, եւ Եղնալեղուն ի Թորթին ցեղերուն է» ըսելն Բժշկարանին (Հայրուսակ, 611)՝ շատ հաւանական կ'ընծայէ զնոյնանշանու թիւնն Թորթ = Oreanète. (Էմինեան զ'Օրեանետ կը թարգմանէ «Կարմիր Թորթ»։ բայց կը սխալի «Թորթ» կոչելով զբոյսն Տամուռէ, ինչպէս պիտի ցու ցանեմ ի Մեկնուրեան Բառից Գաղիանոսի։) Հ. Պաւլոս Մեհերեան կը զրէ յիւր Գաւառի բառս. «Թորթ. է խոսինչ ծառանման եւ բազմաժիւղ՝ նման Մեղրածծուկի. հաստարմատ է, եւ երկայն է արմատն երկրիլ եւ մոռ. զիւզս եւ զճարպս ներկէ գեղեցիկ կարմիր [այսպէս եւ (Օրեանետ), բայց ի ջուրն ոչ միանայ ներկ իւր որչափ եւ եփես, զամն զի իւզային է։ Սովիմք ներկեն զծայրս մոռից եւ զմոմս ճարպից եւ մեղու»։ Հայրուսակն, 803, կը յիշէ ի Բժշկարանաց կարմիր Թորթ եւ Սպիտակ Թորթ. յետինս է թերեւս Առշնարանը, զոր Հայրուսակն, 1029, կը նշանակէ ի Բարերդ։ Գաղիանոսի Բառք «Խարի» կը կոչեն զ'Anchusa. (տես զիմ Հայկական Բառաննուրիւն, երես 117, թիւ 13 :)

Մեղրիկ նոյն թուրի ընդ «Մեղրուկ. ծաղիկ է նման Եղնալեղուի (գղ. Buglosse) ծաղկին»։ Հ. Մկրտիչ Անանեան, Բող. Աշխ. Գըրաբ. ։ Նոյն է հաւանականօրէն եւ Մեղրածծուկ՝ որու կը նմանի Թորթն ըստ Մեհերեանի, եւ կարծեմ է լու. Ceritha, գղ. Mélinet, մեղու աց յոյժ սիրելի ծաղիկ մի ի Բորրագինես տոհմէ՝ հանգոյն Եղնալեղուի եւ Թորթի։ «Մեղրուկ» ծաղիկն յիշատակեալ է եւ յԱգաթանգեղ, 480։ Կայ «Մեղրածծուկ» ի Բառս Գաղիանոսի կրկին նշանակութեամբք. 1. գղ. Mélilot. 2. գղ. Martubē, արաբերէն Ֆերասիյուն. որ ի հին թարգմանութեան Դեղոց գրուած է. «Վրասիոն. Մեղրածծուկ»։

25. Թուխմար (Ս եւ Կ). իսկ Մ եւ Ե՝ Ղաթմար. տող 71, «Խաշխաչն զթագն է բոլորել, գեղեցկացի հետ թուխմարուն»։ Անձանօթ։ Հայրուսակն, 813, կ'ըսէ՛ թէ Թուխմար ծաղիկի անունն «յիշուած է եւ յօրագիրս, բայց ոչ բացատրուած»։ Իցէ՞ արդեօք «Մշակ. ԺԼ. 88»։ տես զիմ Դիտողութիւն յ'Անթեառամ ծաղիկ։ Կարելի է թէ ուղիղ ձեւ անուան ծաղկիս է Ղաթմար (եւ ո՛չ Թուխմար), թերեւս նոյն ընդ «Ք եաթմար. ուսելի բանջարեղէն մի» (Հայրուսակ, 3183)։

(1) Լիտրէ յետ ասելոյ ի Բառարանին թէ Oreanète բառի ծագումն անյայտ է, կը յաւելու. «Cependant on peut songer à l'arménien orak, couleur, orakanel, se colorer»։ Տես զիմ զիտողութիւնն յ'Additions Լիտրէի Բառարանին ի բառն Օրեանետ։

26. • Թուրիշչան տող Յն, «Թուրիշչան կու բացուի յեա Մշկերուն» : == ի ծաղիկս վարագայ լերին, զոյգ ընդ Մանուշակ, Քենելքիւկ տես ի Գինարբ), Աղբրանց արիւն, Կակաջ, կը յիշէ ինժինեան, նոր Հայուսան, 147, եւ Թուրիշչան, տոանց նկարագրելոյ: (Հայրուսակըն, 817, սխալ կը գրէ Թուրիշչակ, եւ նոյն կը կարծէ ընդ նորահնար Թաւրնջակ բառի, զոր տես ի թիւ 95, Դատիվաւ) նոր Հայկազեանըն, ի բառն Տերուկ, կամ Տերեփուկ, եւ Տերփուկ, գլ. (Centauré, կը գրէ Դուրուշան, եւ կ'ըսէ թէ Մեծ Տերեփիկին ծաղիկն ոչ նման ասացելումն ումկօրէն Դուրուշան»: եթէ «գունվակ» նման է Մեծ Տերեփիկին (գլ. Grande Centaurée, Centaurea centaurium) ծաղիկն Դուրուշանի ծաղիկն, քսպա սորա ծաղիկն կապոյտ է: Ինձինեանի «Թուրիշչան»իւ կը տեսնուի որ խանդարեալ գրութիւնք են Թուրինչան (Մ). Թուրինչան (Ե), Թուրն ու շահն (Ս եւ Կ), յեաին ձեւս կը մերձենայ նոր Հայկազենի «Դուրուշան»ին: Հայրուսակն, 775, կը գրէ Թաւրընջակ: կը յիշէ եւ զգրութիւնսն Թուրինչան, Թուրնուշան եւ կը համարի նոյն ընդ վերոյգրելոյն Թաւրնջակ:

27. • Հալազար • տող 89, «Խամն ու Խալինճն ու Հալազարն»: == Ալալազար: է բոյս ինչ մնասակար որ բուսանի ի պարարա տեղիս: ունի ի ծայրս ոստոց քառանկիւն գնտակս սակաւ երկայն, զորոյ սերմն արկեալ ի ջուր արբուցանեն մարդոյ, արբենայ եւ կատարեալ յիմարանայ: բայց ոչ տեւէ բազում ժամանակ յիմարութիւնն, այլ քսանեւչորս ժամս կամ աւելի պակաս»: Հ, Պաւլոս Մեհերեան: նոյն է անտարակոյս եւ Լիլածաղ (Հայրուսակ, 912):

28. • Լեզուակ: (Մ՝ Լուակ:.) տող 77, «կու բացուի մէջ մարգերուն, ծաղիկն մօռ մանաւուշ (== մանուշակագոյն) է, նորա երամն է ինքնազոյն»: == Կ'անդիտանամ: ի հուաքման գաւառական բառից գըտած եմ որ Եղնալեզուն, գլ. Buglossæ, կ'ըսուի եւս Լեզուախոտ:

Լծուի: տես Միլծափի ի Մափ:

Լուակ: տես Լեզուակ:

29. • Լօշտակ: Տող 98, «Փեննայ ծաղիկն ու Լօշտակն՝ Աստուած դեղ առել զարդերուն (== հիւանդութեանց)»: ==

Փեննայ է նոյն ընդ Փենունայ, գլ. Pivoine, Թուրքերէն Այլ կիւլիւ, որ ժամանակաւ շատ գործածական էր ի ղեղորայս: Հաս Բժշկարանաց կը կոչուի նա եւ Խաչափայտ (Հայրուսակ, 1009), որ է թարգմանութիւն արաբականին Ա'ւս իւս ասլիյա == Փայտ խաչի: կ'ըսուի եւս ի Բժշկարան՝ ձշնաբօտ (== ձշնաբութ ի Մուշ: Ինս

Ճիճեան, Նոր Հայաստան, 183. — «Ճշնանուր ծաղիկը, Մշոյ լերանց թագուհին, որոյ տհաքը նման է բաղմաթերթի բոսոր վարդին»։ Սրուանձաւեանց, Թորոս Ալյատ, Հ.Ա. 12. տես եւ ի Մանամայ, 449։) Սալածորեցին որիչ կը յիշէ զՃշնանուր օտ յ'99 տողին, ուր Ս եւ Կ գրած են Ճշնարօր։ բայց ըստ Հ. Պաւլոսի Մեհերեան՝ «Ալրօր կամ Ճշնարօր է թոշուն ինչ ման քան զրադ գոյնզգոյն, առաւելապէս՝ կարմիր»։

Լոշտակ է զդ. Bryone, Couleuvrée, Vigne blanche, որոյ արմատն «ՀԿ կերպ ցաւոց գեղ լինի ասեն», կը գրէ Սրուանձաւեանց ի Մանամայ, 449։ Շատերն Լոշտակ կը կոչեն նաև եւ զՄանրագոր, գդ. Mandragore։

30. Խազալ. (Խազազ?) տող 99, «Խազալն թուփն է բոլորեւ, բուսել է հեա Ճշնարոտուն»։ = Կ'անգիտանամ։ Կայ «Խազազ, որ ունի զճեւ եւ զեամ բրասայի [գդ. Poireau]։ Սրուանձաւեանց, Մանամայ, 445։ որ եւ «Խազեկ. ինքնարոյս բանջար՝ որ ունի գլուխ իբրեւ Սխտոր, բայց փոքր յոյժ։ քան զԱղին եւ Սխտոր պինդ է»։ Պետրոս Վ. Կալհօկեցի, Ասիական ճանապարհորդութիւն ի հայրենիս, երես 131, թիւ 327։ Խազազի կամ Խազեկի հետ նոյն թուփն եւ Խազաս (Հայրուսակ, 959), Խազազ (Խազազ?) (անդ, 956)։ (*)

31. Խաժ. տող 89, «Խաժն ու Խալինձն (Ս եւ Կ. իսկ Ե եւ Հայրուսակ, 984, 969՝ Խաճն Խալիճն) ու Լալազարն»։ = Կ'անգիտանամ թէ՛ զիս աժ եւ թէ՛ զիս ալ ինճ։

32. Խաժուակ. (Կ' Խոժուակ.) տող 35, մի ի չորից նախարոյս զարնանային ծաղկանց, զոյգ ընդ Զիւնածաղիկ, Զիզիտամ եւ Բարդ. (տես Ախախնձոր եւ Բարդ)։ = Նոյն թուփ ընդ «Խաժուարեկ» ըստ գարնայնոյ ընդ հալիլ ձեանց՝ որ կանաչագեղ ծաղկաւէտ լինիր։ Նոր Հայկազեան, Աշխաբէիկ բառք։

33. Խալինճ. տող 89։ Տես ի Խաժ։

Խաճ. տես Խաժ։

(*) Մանօր. Խմբ. — Մենք կը կարծենք որ Խազալ ռամկացած ձեւն է արբ. Հանգալ (= զդ. Coloquinte) բառին։ — Մեծարզոյ հեղինակն իւր հոյակապ Բառարանին մէջ (Coloquinte բառին առջեւ գրած է «իշկոյ վարունգ», որ սխալ է, իշկոյ վարունգ է զդ. Concombre sauvage կամ բուն Concombre d'âne, իւր. Cocomere asinino եւ ըստ Լիննէի Moinordica elaterium. Այս բառը Լուսինեան նոր Բառզբին մէջ սըրագրուած եւ դրուած է Élatérium բառին առջեւ, մեր մասնաւոր ցուցման վրայ։

34. Խաշխաղ . տող 71 : == Մանօթ ծաղիկ . արաբերէն Խաշխաղ , գղ . Pavot . յունարէն բառի . կ'ըսուի ի գիրս մեր եւ Մեկոն :

35. Խնկուկ (Մեկ կ) . Ղակոգ (Մ) . Խակուկ (Ե) . տող 51 : == Անձանօթ : Յ'84 տողին՝ ուր Ե ունի Կոնկուկ , իսկ Մ եւ Կ՝ Կանկուկ , Ո կը գրէ գարձեալ Խնկուկ :

Խոժուակ . տես Խաժուակ :

36. Խոլորձ . (սխալ է Խոլոց , Մ .) տող 80 : «Խոլորձն ջահառի թիին , պայծառանայ առաւօտպն» : == Թերեւս ուղղականն է Խոլորձն , սեռական Խոլորձան , ինչպէս կը կարծէ եւ Նոր Հայկազեանն . քանզի Գր . Նարեկացի կը գրէ ի Տաղին Յարութեան «Սայլն այն իջանէր» , երեսք 473 , 474 .

Եթէ հարիւր բարդ Խոլորձան , վեց Կորընկան , ~

Մին Մանուշակ Խորձադիզեալ . . .

Եւ այն հարիւր բարդ Խոլորձան :

Այն նահապետքն են մարդարէք .

Կամ թէ Խոլորձան ուղղական է ի տեղւողդ , հանգոյն Կորնկան եւ Մանուշակ բառից , քանզի եւ Հ . Պաւլոս Մեհերեան կը գրէ . «Խոլորձ կամ Խոլորձան . պատուական խոտ անասնոց , բարակ լարիւ խառնեալ ընդ միմեանս . . . բարձրանայ իբր երեք թզաշափ կամ աւելի , մանրը մանուշականման ցեղեցիկ ծաղկուն արձակեալ զարգարի . նմանութիւն ինչ ունի Որոսման» : Այլք կ'ըսեն թէ Խոլորձն է կարմրածաղիկ : Թերեւս է գղ . Sainfoin . (Խոլորձ զղ . Marrubie ըստ Շահրիմանեանի , եւ Orchis ու Satyrium ըստ Հ . Սր . էմինեանի , սխալ թուին ինձ :)

37. Խոնդատ . տող 73 : «Խոնդատն ծաղկել ծառովն՝ ընկեր եղել հետ Գոճմերուն» : == «Խոընդատ . խոտ հաստացօղուն՝ բարձրացեալ իբրեւ զծառ , որոյ ծաղիկն փոլնգտացնէ զմարդ . վնասակար է աչաց . ի պէտս վառելեաց գործածեն զայս խոտ» . Սրուանձտեանց , Մանանայ , 446 : Հստ Բժշկարանաց է զղ . Molène , Bouillon-blanc , Verbasum thapsus . բայց թերեւս առ Սալամորեցոյ , կը նշանակէ զղ . Phlomide , Verbasum phlomoides , որ կ'ըսուի ռամկարէն եւ Sauge en arbre (== «Խոնդատն ծաղկել ծառովն» . «բարձրացեալ իբրեւ զծառ») , Arbre de Sauge , Bouillon sauvage .

Խալծափ , տող 58 : Տես Մելծափ ի Խափ :

38. Մարուրիկ . տող 63 : «Միլն ու Մլուայն ու Մարուրիկն՝ սուրմայ (== պրս . Սիւրմէ , Մարիր) են քաշել աշերուն» : == Զերեսեան

եւս կ'անգիտանամ։ Վերջինն Սարուրիկ՝ է անտարակոյս ի Սարիր բառէն, զզ. Antimoine, որ կապուտագոյն սպիտակութեամբ մնուազ մի է։ թերեւս Սալածորեցին ըսել կ'ուզէ՝ թէ Մին, Մլուայն եւ Սարուրիկն՝ բաց կապոյտ ծաղկներ ունին։

39. Սափ. տող 51 := Գաւառի բառիւ «Մափ» կը կոչուի «կճիճ տափարակ եւ շրթնաւոր» տափակ կիւվկն»։ Նոր Հայկազեան, Աշխարհիկ բառք իսկ Պօղաճեան կը գրէ «Կօվկճ կճիճ»։ Յայս «Մափ» բառէ թուր թէ՛ Սափ ծաղկին ի տող 51, ձեւոյն համար այսպէս ըսուած։ Թէ՛ Սափ ծափ (Ե՞ իսկ Ս եւ Կ' Մափծալ, Մ' Մափծար) ի նմին տողի, իբր թէ ծափ ծակող, եւ թէ՛ զոյգ յիշեալն Սափ կոտրուկ (սխալ է Փափկոտրուկ ի Մ), իբր ծափ կոտրող, որոյ հետ նոյն է կարծեմ եւ Ղրիմեցւոց Թուրքի բառիւ Զանախ խուան (= Զանազ զրբան) կոչած ծաղկին։ Սափ կոտրուկն է կը յիշուի եւ յԱմիրտոլվաթայ Անգիտաց անպէսն, եւ է զզ. Anémone (ո՛չ թէ Pivoine ինչպէս կը զնէ Հայրուսակն, 1182, 1656) Pivoine է Փեննայ, զոր Խաչափայտ անուամբ կը ստորագրէ Հայրուսակն, 1009)։ «Եանայիխ լ նուման (արաբերէն Շագայիդ իւն նիւման, Anémone, իբն Էլ-Բէյտար, Հ. Բ. 1329)։ Սափ կոտրուկ»։ եւ գարձեալ։ Եաղայիխ ըլ նուման, որ Թուրքն Կալինճիկ յիշակի ասէ, եւ հայերէն Սափ կոտրուկ եւ Պտուկ կոտրուկ այլ կ'ասեն»։ աստ Ամիրտոլվաթ կը խառնէ զՄՍափ կոտրուկ = Anémone եւ զԿելինճիկ յիշեյի, որ է Հարսնոյ ծաղկի, Հարսնուկ, գզ. Coquelicot, քանզի Շազայիդ իւն նիւման կը նշանակէ երբեմն եւ Coquelicot (իբն Էլ-Բէյտար, Հ. Բ. 1329, ծան.)։ եւ գարձեալ Ամիրտոլվաթ «Անումինեայ [= Anémone], որ է Եաղայիդ ի նումաննեա, Սափ կոտրուկ, Պտուկ կոտրուկ, ըսուած է յայլում Բժշկարանի Պըտուկ կոտրիչ։ Հայրուսակն, 1182, 1430, կը նշանակէ եւ Կճըճակ կոտրի, առանց վկայութեան։ Կայ եւ «Ա. ման կոտրի կ. կարմիր ծաղկի ունեցող մանր խոտ ինչ»։ Սրուանձեանց, Մանանայ, 441. տես եւ Ա. ման կոտրիչ, Հայրուսակ, 3045. եւ Ա. ման կոտրուկ, անդ, 1656, Բառք Գաղիանոսի եւ ա՛յլ Բժշկարանք զգդ. Anémone կը կոչէն Պուտ, Պտիկ, կայ Պուտ եւ առ Սալածորեցւոյ ի 48 տողին։ թերեւս Սալածորեցւոյն Պուտ է Anémone, իսկ Մափ կոտրուկ՝ Coquelicot։ Թուրքերէն Զանազ յիօնիկ զրբղը կամ յիշեյի ծաղկի մի կայ, զոր Պօղաճեան նոյն կը զնէ ընդ Կելինճիկ յիշեյի, Coquelicot, եւ հայերէն կը կոչէ Պտուկկոտրուկ, Պուտ, համեմատէ ընդ Զանազ զրբան ծաղկի զոր յիշեցի վերագոյն։

(Մափ) բառիւ բարգեալ միւս բուսոց անուանք, Սափ ծափ, տող 57. Սափ ծիլ (Ե՞ Միկծափ), տող 61. Միլծափ, տող 57, ուր Ե ունի Լծափ, եւ տող 58, ուր Մ եւ Կ ունին Մալծափ, անծանօթ են ինձ։

- 40.** Ծափծակ (Ծափծալ, Ծափծար) տող 51: **41.** Ծափծակ տող 57: **42.** Ծափծիլ տող 61.
- } տես ի Ծափծ:

43. Ծափկոտը ու կուկուկ: տող 51: = Գղ. Anémone. արաբերէն Շազայիզ իւն Նիւման. տես ի Ծափծ:

44. Ծիլ տող 63: Տես ի Ծարուրիկ:

45. Ծիլծափ տողք 57, 58: Տես ի Ծափծ:

46. Ծլուայ տող 63: Տես ի Ծարուրիկ:

47. Կաթնուկ: տող 59, «Ճաղիկն է գեղին, գոյնն է գլուխ դեղիններուն», այս ինքն՝ սաստիկ գեղին է: = «Կաթնուկ, որ եւ իշուկ կաթնուկ: խոտ, որոյ կաթն սաստիկ դառն է. գործածեն իբրև դեղ»: Սրուանձտեանց, Մանանայ, 446, 445: — «Իշակա կաթնուկ շատ կաթնալի խոտ է: Նորա ճիւզերը կամ տերեւնները կտրելու ժամանակ կաթը թափուում է վիրաւորուած բոյսից: Այդ նորա արտասուքն է: Տերեւնները նեղ եւ երկայն են, ցանցաւ, ու կանաչ գոյնով: Մաղիկները դուրս են գալիս ցօղունի զլիխին. նորանք մանր են եւ գեղնագոյն: Կաթը, որի համար յիշեցի, շատ խիստ լուծող քնաւորութիւն ունի, աւելի լուծող քան թէ Թեռչակի [թուրք. Կենկերյէի, գղ. Ricin, Տղկանեփիատ] ձէթը»: Յովհ. Աթանասիանց, 84-85: Նշան Գ. Խաշեան (Համերես Ամսօրեայ, 1895, 184 ա) կը գրէ: «Իշակա կաթնուկ: Խալատիծա աղանձ»: Եթէ ոմն տեղեկացընէ զիս թէ ի՞նչ է Խալատիծա, չնորհակալ կ'ըլլամ:

48. Կակաջ: տող 45: = Գղ. Tulipe. թուրք. Լայկ:

49. Կաքաւու Եղեգ: (ռամկօրէն Կաքուեղեգ) տող 84, «Կոնկուկն ու կաքուեղեգն խիստ կու բաւսնին մէջ քարերուն»: = Հայրուսակն, 1386, կը նշանակէ ի Բժշկակրանէ: «Քանին, որ է Կաքաւու Եղեգ'ն»: Կը գրէ եւ Հ. Պաւղոս Մեհերեան. «Կաքաւու Եղեգ: վայրի մառուզ» [=վայրի Հազար]: Պարսկերէն Քեանին է ըստ Արաբացւոց այն վայրի Եղերդն (գղ. Chicorée) զոր ինքեանք կը կոչեն Դարաշազուն (իրն էլ-Բէյտաց, Հ. Գ. 2263, երես 399), կամ Դարաշազուզ, Դարխաշզուն. այս է զոր Ամիրաոլվաթ կը դրէ «Տարշաղուդ, Վայրի Հազար» (Հայրուսակ, 1863): իսկ հնագոյն թարգմանութիւնն Դեղոց՝ «Տարխաղուկ» (Զաշխաղուկ), Եղեգ»: Կաքաւու Եղեգ'ն կամ' է գղ. Pissenlit, ըստ

բուրաբանից *Leontodon Taraxacum* · կամ գղ. Escarole, *Cichorium Endivia*, աեսակ մի լայնատերեւ Եղերդ :

50. Կինամոն · տող 106 · = Բատ գրոց Կինամոնն, գղ. Շնամում :

? **51.** Կինամոնը · տող 104 · «բարձր լեռներ կու բուսանի Զափրանն հետ Կնքաւորոյն», ըստ Ա եւ Կ · ուր Ե՝ հետ Ճկնաւարուն · իսկ Մ կը գրէ Կնկանվարու . զի ծայրի և գիրն՝ զիմորոշ թուի, «բարձր լեռներ կը բուսանին [կը բուսանի՞] Զափրանին հետ Կնկանվարուն» : = Անձանօթ : Հայրուսակն . 3013 · կը յիշատակէ «Յանծաւորի խոտ = Զափրան» :

52. Կոկոռոչ · տող 40 · ի Մարտի ամսեան՝ յետ Զիւնածաղկի, Զիդիտամի, Բարդի եւ Խաժուակի՝ «Թերզօշն ու Կոկոռոչն կու ջահառին ի յետ զամպուն», այս ինքն՝ իը պայծառանան իսկ եւ իսկ ընդ հալել լեռներու ձեանց, թերեւս զի երկոքեան եւս լեռնական ծաղիկք են, = Կոկոռոչն բառիս սեռականն թուի Կոկոռոչի = Կոկոռոչի ի հետեւալ վկայութիւնս Հին Բժշկաբանին Ս · Ղազարու · «Ալմո · Կոկոռոչի տակ · Շուշան ծաղիկն է» · երես 143 · — «Կոկոռչի ծաղիկ · Նինօֆար» · երես 144 · «Կոկոռ ծաղիկ · որ է Նիլուիֆարն», կը գրէ եւ Ամիրտուլվաթ : Սալածորեցոյն Կոկոռոչն (Քոքոռոչ՝ ըստ Ս եւ Կ · Կոկոռ՝ ըստ Մ · Սքոնոչ՝ ըստ Ե եւ Հայրուսակ, 2846, 695) յթուի Նինօֆար գղ. Népissard, որ ջրային ծաղիկ է · տես ի թիւ 97 · Նունուիֆար · Նկատմամբ Կոկոռոչի (Քոքոռոչ) յիշատակութեանն ի Մշակ լրագրի՝ տես յ'Անթառամ ծաղիկ : — Հայրուսակն, 1459, ունի եւ Կոկոռ, նոյն ընդ Հաղարջենի կամ Հաղարջի, գղ. Groseillier ·

53. Կոճակ · (Խոճակ, Ե եւ Հայրուսակ, 540, 404 ·) տող 83 · «ծաղկել արտերուն» ընդ Գամուտաշի եւ Զատր ծաղկի : = Կ'անդիտանամ : Կայ եւ Կոճակիկ, Կոճակուկ (Հայրուսակ, 1463) : — ի Բառս Գաղիանոսի գղ. Agaric Սունկն՝ Կոչուած է «Ծարազ Վրացի Կոճակի», այս ինքն՝ Վրացի Կոճակ Սնկան մէկ տեսակն :

54. Կոճղէզ · տող 60 · Ակոճղէզն ներկած զանաւուզ՝ հաւան չի լի միւս գոյներուն» : = «Կոճղէզ · փոքր խոտեղէն բոյս մը, որոյ ծաղիկն կը նմանի գունով՝ Վարդի, ձեւով՝ Մանուշակի, եւ հոտով՝ Շահոքրամի» [գղ. (Eillet)] · իսի արմատն՝ կազնոյ մեծութեամբ եւ Գետնաւխնձորի ձեւով է, որ քաղցր համ ունի, եւ դաշտի մկանց գլխաւոր մթերըն էն · Միհրան Մամիկոնեան, Բառք Կարճեցոց, Մշեցւոց, Բարերւ

դացւոց եւ Տրապիզոնեցւոց : Ի Բառս Գաղիանոսի՝ յունարէն «Թողրոս
[եղովինեն]» բոյսն, որ կ'ըսուի գլ. Muscari chevelu կամ Vaciet, հա-
յերէն թարգմանեալ է Կոճողի կ կամ Կոճողիս : Muscari ծաղիկ է
յաղգէ Շուշանաց : Այժմ սովորութիւն եղած է Կոճողի կոչել եւ զսիս
արմատոց բուսոց ոմանց, գլ. bulbe.

55. Կոճողուկ . (Կանկուկ, Մ եւ Կ, ուր թերեւս ո գիրն՝ սիալ-
մամբ ա կարդացուած է . իսկ Ո՞ Խնկուկ, զոր տես ի կարդի և նշանա-
գրի .) տող 84, «խիստ կու բուսնի մէջ քարերուն» հանդերձ կաքուեղե-
ղիւ : = Կանգիտանամ :

56. Հազարդաբուն . տող 89, «հոտիկն անուշ Հազարդաբուն»,
իմա՞՝ անուշահոտն Հազարդաբուն . (սիալ է ի Մ եւ Կ՝ «հոտիկն անուշ
եւ զարդարուն» :) = Հայրուսակն ի թիւ 984, անուշադրութեամբ գրած
է . «Խաճն, Խալիճն եւ Լալազարն, հոտիկն անուշ Լալազարուն»: փոխա-
նակ Հազարդաբուն : Ի թիւ 1579, Հազարդարա կը գրէ յուղակա-
նըն, որպէս թէ սեռականն ըլլար Հազարդարու . եւ դիմորոչիւ Հազար-
դարու՞ն, Թէպէտ եւ ըստ Ամբրառլվաթայ թուրքերէն Հազարդարա կը
կոշուի Ասիսոնն (Հայրուսակ, 109), բայց Սալամորեցւոյ երգած ծաղկին
անունն Հազարդաբուն է յուղականն, զի՞ սովին անուամբ ծանօթ
է ցայժմ այս ծաղիկի ի կողմանս Գեղաքունեաց = Նոր Պայազիտի . «Մաղ-
կանց մէջ (Նոր Պայազիտի) անուանի են Կակաչ, Սղբերաց արիւն, ...
Հազարդաբուն» (տպ. հազար տարրուն), անուշահոտ սպիտակ մանր
ծաղիկ, որ ցողունին վրայ զնջածեւ կը բացուի . ասոր սերմնը հացի
երեսը կը ցանեն եփելու ժամանակ եւ շաա համեղ է : Տեղագրական
Պատառիկներ . Նոր Պայազիտ . Արևելեան Մանուչ, 1895, Հոկտ. 15, երես
619. — «Նոր-Պայազիտցւոց . . . ծաղիկների անունները համարեա բոլորը
հայերէն են, զոր օրինակ Ցորնածաղիկ . Հազարդաբուն, Հայա-
վարդ», եւ այլն . Մեսրովը Արքեպ. Սմբատեանց, Տեղազիր Գեղրութուն-
ոյ, տպ. Վաղարշապատ, 1896, երեսը 452-453 : Հ. Ալիշան գտած է
— յայտնի չէ յո՞ր գիրս — Հազարգաւուն, որ կամ տպագրական սիալ
է փոխանակ Հազարդաբուն . կամ Հազարդաբուն ար-
պուած է եւ Հ. Ալիշան սրբագրած է Հազարդարուն . քանզի կը գրէ ի
Հայրուսակին . «1578. Հազարդարուն . ըստ անուանն թուի գեղեցիկ ծա-
ղիկ մ'ըլլալ . յիշուի ի լերինս Գեղաքունեաց» :

57. Հազրէվարդ . տող 90 : = Տեսակ զեղեղիկ Վարդի . բա-
զում ուրեք յիշատակեալ ի գիրս մեր, նախ առաջին ի Գր. Նարեկա-
ցւոյ, կը գրուի եւ Հազրէվարդ կ Հազարդարուն . քանզի կը գրէ ի
Հայրուսակին . «1578. Հազարդարուն . ըստ անուանն թուի գեղեցիկ ծա-
ղիկ մ'ըլլալ . յիշուի ի լերինս Գեղաքունեաց» :

Հազրէ վարդ եւ Համասփիռո, յորոց «մնծ մարգարէն Մովսէս եփեաց իւղ աստուածային» ուրիշ ծաղկներու հետ խառնելով։

58. Համասփիռ առղ. 121, «ծաղկել ծաղկովն հազարագոյն, ամէն թփին գոյն մի ծաղիկ՝ երկոտասան արմատ ունի. կոյր աշերուն լոյս կու բերէ. Հըեշտակք զմայլին անուշ հոտոյն, յորմէ եւ արքայիկ օճն (գլ., basilik) զօրութիւն կ'առնու» : = Զայս ծաղիկ՝ Միթիթար Գոյ յեւակի իւր, իջ. 30, 31, կ'անուանէ Համասպապրան, իւր գեղեցկութեանն համար՝ բուսոց թագաւոր ըլլալու արժանացած. անդ, եւ իջ. 32-33. (ինչպէս յիս Գոյի տաղասաց ոմն ալ կը գրէ «Համասփիռ ծաղկանց ամիրայ») : Ըստ Գոյի՝ Համասպրան դժուարագիւտ ծաղիկ մի է, (զի կը բուսնի ի կատարս լերանց .

Մաղկեալ Շուշան ի հովտին,

Եւ Համասփիռ ն ի լերին,

կ'երգէ Մարտիրոս վարդապետ ոմն յիւրում Տաղին «Կայթեա՛», սուրբ կաթողիկէ») . ունի երկոտասան ոստ, (ինչպէս կ'ըսէ եւ Բժշկարանն . ուշանք ծաղկին այս է . մի արմատ ունի, եւ արձակէ բազուկս [=ոստս] երկոտասան, եւ ունի ամէն մէկ՝ գոյն մի ծաղիկ այլեւայլ, կապոյտ, եւ ծիրանի, եւ շուշան, եւ այլ . որ ամէն գունից զարդարեալ է Համասփիռ ն ան ան . տես Հայրուսակ, 1613, երես 356 . որով սխալ թուի Սալածորեցւոյն ըսեկն՝ թէ երկոտասան արևած ունի . նոյնպէս ոխալ թուի Տիրան երգչի բսածն, Հայերգ, 49, թէ «Համասփիռ ծաղիկն ունէր երկոտասան թեր» [=տերել]) . Համասպրան մեծամեծ բժշկական զօրութեամբ ճնխացեալ է, հիւանդաց առողջութիւն կու տայ, զախ (տպ. զայլ . «զաչս» կ'ուղղէ եւ Հայրուսակն յերես 354) քաջատես առնէ (համաձայն Սալածորեցւոյն՝ «կոյր աշերուն լոյս կու բերէ»), ի վերայ ծովու գնալ տայ, իմաստութեամբ զտգէսս լցուցանէ (վասն որոյ «մայր իմաստութեան» կոչուած է յայլմէ) . Ախրիզան ծաղիկ նման՝ ինքն եւս լուսով նշանի ի գիշերի գտանի (ինչպէս կ'ըսէ եւ վերոյիշեալ Բժշկարանն՝ թէ «պարտ է ինդրել զՀամասփիռ ծաղիկն ի գիշերի, զի ի դիշերն պայծառագոյն երեւի ծաղիկն ի յաչս խնդրողաց») :

Ի՞նչ է այս գեղեցիկ ծաղիկս՝ ժողովրդական առասպեկներու կուտակութեամբ չհաւատալի ծաղիկ մի դարձած . Հայրուսակն, յերես 357, կը համարի «Lychnis կոչուած ծաղկանց ցեղէն» . արգեօք ա՞յն է որ կը կոչուի գլ. Anémone pulsatille, «l'espèce (des Anémones) la plus riche en propriétés médicales ... employée à l'état frais, elle est utile dans les divers cas de paralysies, surtout dans celle de la rétine (համեմատէ . «զաչս քաջատես առնէ» . «կոյր աշերուն լոյս կու բերէ»), dens les rhumatismes et les maladies cutanées rebelles». Emin. Le Maout et J. Decaisne, *Traité général de Botanique*, Paris, 1868, երես 399 . (ըստ

Լիտրէի՝ Anémone pulsatille եւ Lychnide coronaire ծաղիկքն կը կոչուին ռամկօրէն Սօվուլուրդ։)

Թութ թէ ի Բժշկարանս կը գտնուի տեղեկութիւն զշամասփիւռէ՝ թարգմանեալ ի յունէ։ Քանզի նոր Հայկազեանն ի Համասփիւռ՝ ի մէջ կը բերէ զյաջորդ վկայութիւնդ։ «Համասփիւռ ծաղիկ։ Այսէ մեկնութիւն Դիբնեսիոսի ինսասասիրի, որ ականատես եղեւ Համասփիւռ ծաղկին»։ Եւ կը յաւելու նոր Հայկազեանն։ «Երկար առասպելք վասն ամենածաւալ ներգործութեանց անգիւտ ծաղկանս»։ Ցաւալի է որ Հայրուսակն հրատարակած չէ զ«մեկնութիւնդ Դիբնեսիոսի իմաստասիրի»։ Զայս եւս ըսեմ որ Համասփրան բառի շատ կը նմանի պարսկերէնն ձեմսիթերմ։ (Համեմատէ Շահասպրամ = պրա։ Շահսիխերմ)։ Ձեմս սիթերմ է սպիտակ եւ կարմիր ծաղկօք բոյս մի «որ շատ լինի ի լերինս իսֆահանուու»։ Կը գրէ Դէրորդ ի բառն Շահպանիմ։ (տեսանք որ Համասփիւռն եւս լեռնական ծաղիկ է)։ Ամիրտոլվաթ զՃամափրան կը կոչէ այլով անուամբ «Սողոմնի Ռահան» (Հայրուսակ, 2663, ուր Ճամափրանի հետ համեմատուած է նա եւ Համասպրամ)։ արդ՝ «Իմաստունն» Սողոմնի անուամբ կոչուած «Սողոմնի Ռահան»։ Կը յիշեցնէ զշամասփրան որ «իմաստութեամբ» զտգէտս լցուցանէ։

59. Հաւրուտ եւ Մաւրուտ. (ռամկօրէն Հօրօս Մօրօտ, Խօրօտ Մօրօտ) տող 65, «մաւի (= կապոյտ) ներկած ժանկառի (= բաց կանաչագոյն) նման սուրմայուն»։ = Հնագոյն վկայութիւն ծաղկիս անուան կը գտնուի յԱզաթանգեղ. 480. Հաւրուտն եւ Մաւրուտն եւ Մաւրուտն ըստ ընտիր Զեռագրին Արքահամ Երիցու՝ որ կը գրէ հօրուտն եւ մօրուտն, ուր ապ. ունի հօրօսն եւ մորօսն։ նոյնպէս եւ Մխիթար Գոշ (Առակի, լ. 36). Հաւրուտն եւ Մաւրուտն, իբր լեռնական ծաղիկ, Բժշկարանք եւ տաղասացք կը գրեն Հօրօս Մօրօտ, ինչպէս կ'ըսեն ցայս օր եւ ի գաւառու Հայապտանի։ Հաւրուտ եւ Մաւրուտ մէկ ծաղիկ է։ Եթէ երկու ծաղիկք ըլլային՝ Հին Բժշկարանն Ս. Ղազարու չէր գրեր «Հօրօս Մօրօտ ծաղիկի տակ» (Հայրուսակ, 1761)։ Նոյնպէս եւ տաղասացն, «Որ թէ զՀօրօտ Մօրօտն ասեն՝ չէ նըման»։ տես Ճռաքաղ. 1859, երես 153 ա. տես եւ զբանս Կոստանդնի Երզնկացույոյ յԱխլախնձոր։ Սիմէռն կամներկապցի կը գրէ լոկ Հօրուտ։ (տես ի ստորեւ.) նոյնպէս եւ Խնճիեան, նոր Հայաստան, 89, «Հօրօտ կոչեցեալ ծաղիկն»։ նոր Հայկազեանն եւս որիշ որիշ կը գրէ Հօրուտ, Մօրօտ, որ չթուի ուղիղ։ Հաւրուտ եւ Մաւրուտ ծաղիկի անունն՝ շատ նման է անուան երկուց Հրեշտակացն Հարութ վկ Մարութ զորոց կը խօսի Կուրանն. Դէրորդ կը գրէ թէ սոքա կախարդութեան կը պարապէին, եւ վասն այնորիկ Արտուրած արտաքսեց զնոսա յարքայութենէ եւ գլխիվայր կախեց ի ջրհորի միում Բարելոնի (Չա՛նի Պապի)։ եւ թէ

կախարդութիւն ուստանել ցանկացողներն կը դիմեն յայն ջրհոր առ Հարուր վկ Մարոր : «Հաւրուտ եւ Մաւրուտ» ի Հայր եւ Մասոյր են, կամ թէ ունին ո՞ր եւ է աղերս Հարուր եւ Մարոր Հրեշտակաց հետ, որոց զրոյցն՝ թերեւս ոչ միայն քան զիւթներորդ գարն, յորում շարագրեցաւ կուրանն, հնագոյն է, այլ եւ քան զշինգերորդն՝ յորում թարգմանեցաւ Ազաթանգեղ ի հայ :

«Հօրուտ, կամ Հօրուա . նոյն եւ ոամկօրէն . ծաղիկ զեղեցիկ եւ անուշանոտ իբրեւ զկանթեղաշար փունջ մանրիկ Շուշանաց, հանգոյն Սըմպուլի [գղ. Jacinthe], է' որ կապուտակ, եւ է' որ սպիտակ . Թուրեա, Թիւրեա յիշէյի . » Նոր Հայկազեան . — «Մօրուտ . Հօրուտ . Հյացինհար րաշտոս Ծածուե . տերեւք հինգ կամ վեց ելեալ յարմատոյն տարածին ընդ գետին, որոյ երկայնու թիւն է իբր կէս ոտնաչափ, նեղ, շերտաւոր, ստուար . ծաղիկն մանր սկահաճեւ, միաթերթի, հերձեալ վերուստ ի հինգ չըթունա, եւ ողկուզածեւ համագումար ի գոյնս զոյնա : Յանախ է տեսանել ի Հայս» . Ստ. Շահրիմանեան . — «Թուրիայ . ծաղիկ . Հօրուտ, Հօրուտ . » Հ. Մկրտիչ Անանեան . — «Թուրեա յիշէյի . Հաւրուտ» . Պօզաճեան : Սալածորեցին որիշ կը յիշէ ի 107 տողին զ'անա Թուրիայ ծաղիկն՝ որ ձեռքն չինգնիլ ջառահներուն (= վիրաբոյժներուն) . ամէն սահմանք չի գտնուիլ, դիյմաթ (= յարգ) չունի իւր տեղին : Ի հաւաքաման ուրեք Գաւառի բառից գտած եմ . «Թիւրեա . ծաղիկ է քաղցրահոտ, կարմիր եւ գեղին . ի մարգագետինս լինի» . իսկ Գէորգ կը զրէ ի Պրո-Հայ, Բառարանին . «Թուրեա . է բազադրութիւն իմն հոչակեալ եւ ծանուցեալ ամենեցուն . [գղ. Tutie] : Եւ եւս՝ է տեսակ իմն սպիտակ ծաղկան, զոր չորացուցեալ՝ խսկոյն յաչս քարշեն» : Նշանակեմ եւ զգրածն Սիմէոնի Կամերկապցոյ . «Կանաչ Մարուր . Հօրուտ . Կանաչ Թուրիայն է, որ է ծաղիկ . Կարինոյ սարն լինայ» (Հայրուսակ, 1178) : Էմինեանի համար թէ՛ Բրաբիոն եւ թէ՛ Հօրուտ եւ Մօրուտ՝ կ'ըսուին գղ. Tüth-Teuse, (աեւ ի Բրաբիոն :

ՅՕ. Հոռոմ ծաղիկ . տող 47. «Է փշոտել (ո՞չ թէ փոշոտել, փոշոտեր, փոշոտահել, փշտեր), բուսել հետ Մոշին Մորենուն» : =Կ'անգիտանամ : Պետրոս Քալանթարեանի «Հռոմանի ծաղիկ»ն՝ Երիցուկ է, գղ. Camomille, ըստ Հայրուսակի, 1749 : Խոկ Հոռոմ ծաղիկ ն փշոտ է, եւ Մոշի ու Մորենոյ հետ կը բուսնի :

Մոշի է պտուղն Մոշի թփոյ . (ա'յլ է եւ Մոշի, ծառ, գղ. Tamaris, Tamarisc, Tamarix, թուրքերէն իլլուն աղամք .) «Մորենի . փոքրագոյն քան զՄոշի . նոյնպէս եւ պտուղն» . Բառդիք Հայոց Երեմիայ վարդապետի, տպ. Լիվոռնոյ, 1698, երես 215 . — «Մոշի . միրգ սեաւ, եւ ծծուկ ըստ թթոյ, որոյ տաւակն՝ որ Մոշի ասի՛ ըստ Որթոյ ուսոս պրածակէ . բայց է կարի փշոտ ըստ Վարդենոյ» . անդ . — «Մոշի միրգ .

ինքն սեւ Թթի նման է՝ որ Մորենի ասեն»։ Սիմ. Կամերկապցի։ — «Մոշ, ծառ ինչ վայրենի, որոյ պտուղն նման Մորենոյ է, զոր ու տեն»։ Մորենանուանց, Մանանայ, 449։ Սխալ է Մոլ յօրինակին Եազընեանի (Հայրուսակն եւս, 1725, Մոլ, այլ կը կարծէ Մոշ)։ սխալ է եւ Մոլի մօրերուն ի Մ, փոխանակ «Մոշին Մորենուն»։ Գաղիանոսի Բառք կը գրեն։ «Ուահիկ։ Մոլ»։ յորմէ եւ նոր Հայկազեանն։ «Մոլ։ ի բառու Գաղիանոսի զնի որպէս Ուահիկ կամ Ուահիկ (ձայն անյայտ)։ զոր Մտեփ. [Եհացի | == Ռուքեան] իմանայ Թփիկ անպիտան բուսեալ յարմատս ծառոց։ Այլ ի Հայս Մոլ ասի շաղախ յարդախառն, որով առնեն զառաջին ծեփ տանց։ որպէս եւ ծեփելն Մոլով՝ ասի Մոլել»։ Փոխանակ զուղիղն Ուահիկ ընթեռնոյ Ուահիկ՝ զսիալն Մոլ պարտ էր ընթեռնուլ Մոշ, որ նոյն է Սալածորեցւոյն եւ այլոց Մոշ պտղոյն հետ։ իսկ Ուահիկ է արաբերէն իւղիյզ, Մորենի, թուրքերէն Պէօլիւրզին (Թէորդ ի բառն Քիյհէ)։ զոր Ամիրտուլվաթ կը գրէ Յուլելի (Հայրուսակ, 2113)։ տես Ռոնց, գլ. Ronce յ'իբն Էլ-Բէյտար, Հ. Բ. 1578, հայերէն Մորենի, որոյ պտուղն կ'ըսուի գլ. Miroq, Մնրե սանվաց։ Մոշի եւ Մոշ է տեսակ ինչ Մորենոյ, թէպէտ եւ Գաղիանոսի Բառք նոյն կը զնեն ընդ Մորենի, ինչպէս եւ արաբերէնն Մուսա (ձայնիւ նման Մոշի)՝ ըստ մեկնչաց ոմանց է «le fruit de l'Alliq, իւղիյզ, Ronce», իբն Էլ-Բէյտար, Հ. Գ. 2140, ծան.։

61. Զիւն ածաղիկ։ (ռամկօրէն Զնծաղիկ)։ տող 35։ Տե յ'Ա. Խւլախն ձոր։

? Ղաթմար։ տող 71։ տես Թուլիմար։

62. Ճաշկին, կամ ճաշկին ճաղիկ (ըստ Ե. իսկ Մ Ճաշգին։ Ս եւ Կ' Ճաշգինթ)։ տող 103, «է խիստ հոտով, զեղին նման է Զափրանուն»։ — կ'անդիտանամ։

? Ճկնաւար։ տող 104։ տես Կնքաւոր։

63. Ճշնարակ։ տող 99։ = Հստ Բժշկարանաց՝ գլ. Pivoine։ տես ի Լոշտակ։

64. Մամինուպուլ։ տող 56։ = Կ'անգիտանամ։ Անունն կը նշանակէ Մամու խոպոպիք (գլ. boucles)։

65. Մանուշակ։ տող 83։ = Պղ. Violette։

66. Մասրենի։ տող 70։ = Պղ. Églantier։ որոյ պտուղն է Մասուր, գաւառի բառիւ Ագուաւակ, գլ. Gratte-enl., թուրք. Գուրնու։

67. Մատուտիկ. տող 48: = Թերեւս նոյն լնդ Մատուտակ
Բժշկարանաց, որ է զզ. Réglisse.

68. Մեղրիկ. կամ Մեղրիկ ծաղիկ. տող 69: = Թուփ
ի զզ. Borraginées տոհմէ. տես ի թուրթ:

69. Մշկիր. տող 55: = Կ'անդիտանամ:

70. Մոշ. տող 47: = Տեսակ Մորենովյ. տես ի Հռոմեամ ծաղիկ:

71. Մորենի. տող 47: = Գղ. Ronce. տես ի Հռոմեամ ծաղիկ:

72. Մուրտ. տող 86: = Գղ. Myrtle.

73. Մըռւան. տող 79, «Ծրուան ծաղիկն է սպիտակ, մարգն
բուսնի հետ Մըռւանուն (Մ' հետ Միանձնուն)»: = Գղ. Asaret, ու-
մկօրէն Cabaret. արմատն կը կոչուի ի Բժշկարան Մըռւանտակ:

74. Նարդոս. տող 106: = Գղ. Nard. արբ. Սիւմպիլի հին-
տի. Սիւմպիլի ռումի:

75. Նարկիզ. տող 54: = Յ'Ազաթանգեղ, 480. գրեալ է Ներ-
գիս, եւ ի Զեռագրին Աքրահամ Երիցու՝ Ներգիս. պրո. Ներիշիս. արբ.
Ներնիս. Զերրին զատահ. գղ. Narcisse.

? **76.** Նաֆ (Մ). Նաֆաֆ (Մ եւ Կ). Ֆաֆ (Ե). տող 52, «Նաֆն ու
Զինարն ու Ըսեհան՝ հոտերն անուշ քան զամենուն»: = Անծանօթ:

77. Շարշարուրիկ. տող 93, «զեղին քաշել վերայ փորուն,
թերերն ամէն պաղամ ներկել, ոլոքն որպէս Տորուն»: ըսել կ'ուզէ թէ
Շարշարուրիկ բուսոյ թերերն (= տերեւներն) Որդան փայտի (= թուրք.
Պազար աղաճ. զզ. Bois de Brésil) պէս կարմիր են, ոլոքն — անշուշտ
ծղօտն կամ ցօղունն — Տորունի կամ Տորոնի (զզ. Garance) կարմրու-
թեամբ, իսկ փորն — թուրի ծաղկին մէջն — զեղին: = Կ'անդիտանամ:

78. Շուշան. տող 86: = Գղ. Lys.

79. Շրուան, կամ Շրուան ծաղիկ. տող 79, «է սպի-
տակ, մարգն բուսնի հետ Մըռւանուն «(զզ. Asaret)»: = Կ'անդիտանամ:
Եպիփանու կիպրացւոյ Բարդյախօս գրոց մէջ «Ծրուանդ» կը նշանակէ

Ողկոյզ խաղողոյ թօթափեալ ի հատից , գդ . Rafle . խսկ պրա . Շիրվան՝ է անուն հին Աղուանից աշխարհին , որոյ գլխաւոր քաղաքն եւս կը կոչուի Շիրվան . զոր կը յիշատակէ եւ Կիրակոս Գանձակեցի , 99 , Շրուան տպ . Շիրուան :

80. Ո ս կ ե ծ ա ղ ի կ . տող 91 , «գեղեցկացել լաւուն լաւուն (= կերպ կերպ) , գլխուն ջղայ (գդ . aigrette) է զարկել՝ իբր ծաղկանց ենգիչարու (=թուրք . Եկնիյերի) » = «Մինչ չեւ . . . իցէ . . . խորտակեալ մանեակ ոսկոյն» : Կ'ըսէ ժողովողն , ԺԲ . 6 . որ ի Կիւրզի Երուսաղեամացոյ կոչ . Հնծ . ԺԵ . 321 , թարզմանեալ է . «Եւ թարշամեսցի Ո ս կ եծ ա ղ ի կ ն . զոսկեճաճանչ արեգակն առակէ . զի Անթեմս այս երեւելի բանջար է բազմապատիկ , որ (տպ . բանջար է . բազմապատիկ որ) շուրջ զիւրեաւ ունի բուսեալ ճառագայթաճեւս զտերեւովն » . յոյնն փոխանակ «Ուկեծաղիկ» Կ'ըսէ ի նմին տեղուոջ «փոքրիկ ծաղիկն (անթեմիոն) ոսկեղէն» . խսկ Անթեմ , յունարէն Անթեմիս , է գդ . Camomille , Երիցուկ . զոր Բառք Գաղիանոսի կը զրեն՝ «Անթեմ . Կոռոց ծաղիկ» : Սալաձորեցւոյն Ո ս կ ե ծ ա ղ ի կ ն՝ ցցունաւոր ծաղիկ մի թուի : Կայ եւ «Կոնկու ջղայ (գդ . aigrette)» բոյս մի , ըստ Խոտրջրեցւոց (Հայրուսակ , 1546) :

81. Զ ի ն ա ր . տող 52 , «Հոտան անուշ» : = Կ'անգիտանամ : Պրա . Զինար կամ Զինար է Սօսի ծառն , գդ . Platane .

82. Պ ո ւ տ . տող 48 , «Պուտն ու Պտուակն (Ե՝ Պտվակն . Ա՝ Պտուան . Մ եւ Կ՝ Պուտվարդն) ու Մատուտիկ եւ ա'յլ ծաղկունք բացուին սիրուեն» : = Գդ . Anémone ըստ Բժշկարանաց . տես ի Մ ա փ :

83. Պ ո ւ տ ա կ , Պտուայ , Պուտվարդ . տող 48 : = Անծանօթ : Թերեւս Պտուակ=Պտիկ (զոր տես ի Մ ա փ) , տեսակ Անէմոն ծաղիկ :

84. Ռ ա հ ա ն . տող 52 , Հուեհան կամ Խեհան գրուած : = Արք . Իկիհան . թուրք . Ֆեայիյեն . գդ . Basilic . Կ'ըսուի ի Բժշկարանս եւ Թագաւորասպրամ , Շահասպրամ , պրա . Շահսիփերդիմ , Նազուր :

85. Ս ի ն ձ . տող 81 . տես յ'Ե ղ ե ր դ ա կ :

86. Ս ո ւ տ -կ ա ր դ . տող 70 : = «Մասրի (գդ . Églantier) . փըշտ կամ Ս ո ւ տ -կ ա ր դ» , գրուած է ի հաւաքման բառից Խոտրջրեցւոց . խսկ Սալաձորեցին թուի զանազանել , քանզի Կ'ըսէ . «Ս ո ւ տ -կ ա ր դ ն է բաժնուել յերարմէն՝ խառնուել յերամն Մարենուն» :

87. Վ ա ր դ . տող 90 : = Գդ . Rose .

88. Տորուն. տող 94, անցողակի յեշուած : = Գդ. Garance.

89. Տուղտ. տող 69 : = Գդ. Guimauve. թուրք Կիւլիարէկ :

90. Ծինկ . տող 41, «Ծինկն զեղին ծաղիկ՝ ցնծայ, փայլէ, ծփայ
մէջ ջրերուն» : = Այս ծաղկիս եւս անունն կ'նշնէ մինչեւ յ'Ոսկեգար
հայ գրականութեան, զի յ'իմաստութեան Սիրաքայ, և . 16, զրեալ է .
սծինգ առ ամենայն ջրով յեղեր գետոյ՝ յառաջ քան զամենայն խոտ
խլեսցի» . Եւթանատունք ի նմին անդւոց ունին «Աչըւ, որ չէ յունարէն,
եւ ինձ թուի երբայցեցերէն Ախի կամ Եախ բառն՝ որ կը նշանակէ կանաչ (*)
(տես Կանաչ ի նոր Հայկազեանն) . Թերեւս զի ջրասէր բոււռյա տերեւնե-
րըն միշտ կանաչ կամ դալար կը մնան : Կայ ծինկ եւ յԱռակս Մխիթարայ
Գոշի, ԼԳ. 39, «Ճիւրեալ զեղնութեամբ» : ակնարկեռվ ի զեղին գոյն
ծաղկներուն : Եատ հաւանական է որ ծինկ է գդ. Souci d'eau, որ
եւ Populage, Caltha palustris, ի տոհմէ Հրանունկ ծաղկի, գդ. Renon-
culeacées . Ի տեղիս տեղիս Հայրատանի՝ ծինկ (որ եւ ծունգ) ծա-
ղկին թուի թէ է գդ. Renoncule, զի կ'ըսուի թէ կը բուսնի ի մար-
գագետինս, տերեւներն նման են Մաղտանօսի (գդ. Persil . Հայրուսակն .
1793, 3019, Կարոս կ'ըսէ), եւ ծաղկներովն մարմնոյ վերայ խարան կը
բանան վասն որոյ թուրքերն կ'անուանեն Եազր օրու : Համեմատէ ընդ
գրածին իբն էլ-Բէյտարի, Հ . 9 . 1878 եւ 1947, թէ Քէպիֆհա, գդ. Re-
noncule, սաստիկ կծու եւ այրող է (âcre et caustique à un haut degré),
եւ թէ տերեւներն նման են Selinon sauvage կամ Ache (Լախուր , Նե-
խուր, Կարօս) բուսոյ տերեւներուն : Այս գաւառացիք «Միաբանուկ» եւ
«Կոպոոչ» կը կոչեն զի ծինկ = Renoncule . իսկ Բաղի, Եցիք՝ «Հրանուկ»
(Հայրուսակ, 1752, 3019) . ուրեմն «Հրանունկ = Renoncule» (Հայրու-
սակ, 1753) ոչ է «նոր յարմարած բառ՝ տառապ որձութեա իր լու . Ranunculus
anuus անուան» . ինչպէս կը համարի Հայրուսակն . տես «Ranuncolo .
Հրանունկ . Տիւյիւն չիշեյի» ի Զախճախեանի իտ. -Հայ. Բառագիրս : Ա-
մբրուզաթ թուրքերէն Տիւյիւն օրի կը կոչէ զարաքականն Հալֆա, որ
է գդ. Renoncule âcre, Bouton d'or (Հայրուսակ, 1602) . «Թէ զիր էզն
առնուն եւ զչորեք զին այրեն ի վերայ բշտին խարեն, եւ յայնմամ որ
երեւնայ՝ նա փարատի» :

91. Փեննայ . տող 98 : = Գդ. Pivoine . տես ի Լոշտակ :

Օտարաձայն Մաղիլիք

92. (1) Գուլիսապահ . տող 95, «չի բացուիլ զօրն արեւուն, արեւու-
մըսուն յեւ կու բացուի, պայծառանայ մէջ գիշերուն» : — Ի պարսկա-

(*) Ման. Խմբ. — Երբ. «Ախի կամ Եախս սխալ է . պէտք է լինի Ա-
խու, որ կը նշանակէ՝ «խոտ, մարգ» , եւ ըստ Յովիք. Ը. 11, «կիւնին :

կանէն Կիւր Վարդ, իսկ բարզութեանց մէջ՝ ծաղիկ, եւ յարարականէն Սապան, Առաւօտ, կը թարգմանի Առաւօտածաղիկ: «Գիւլի սարահին, Առաւօտածաղիկն, ստացել է իւր անունը նորա համար, որ սովորաբար ծաղկում է առաւօտները, եւ արեւի ճառագայթներից՝ կէս օրին թարշամում է: ... Ծաղիկը, որ բոլորակ է ու ճագարի նմանութիւն ունի, լինում է Կարմիր սպիտակ, գեղին, երփներանդ զոյներով»: Ցովք. Աթանասեանց, 63: Գլ. Belle-de-nuit, Nyctage faux-jalap, Faux-jalap, Mirabilis Jalapa: թուրք Կէճէ սկֆա, զո՞ր ոմանք թարգմանած են Գիշերազուարձ: մարթի սեպհականել եւ Յայգածաղիկ: — Տես եւ Բարդիսապահ ծաղիկ ի Բարդ:

ԶՅ. (2) Զափրան: առզք 103, 104: = Արք. Զա'փերան, գլ. Safraan, Քրքում:

ԶՒ. (3) Թուրիայ: առզ 107: տես ի Հաւրուտ եւ Մաւրուտ:

ԶՅ. (4) Դատիփա: առզ 53, «ալ (=չիկակարմիր) է ներկուել, նըման բեհեզ ու ծիրանւոյն»: = Թուրք. Գարիփէ յիշէյի, գլ. Amarante, եւ ուսմիօրէն Passe-velours, իտ. Amaranto, Fiorvelluto, ծիրաննպոյն ծաղիկ աշնանային, զոր Հ. Մկրտիչ Անանեան կոչած է՝ թուի յինքենէ յարմարելով՝ թաւրնջակ: «Խատիփէ ծաղիկ, թաւրնջակ»: որ եւ զ'իստիփէ, դղ. Velours, զոր մեզ այժմ կ'ըսենք «Թաւիլ»: կը դնէ «Թաւրինջ»: Վերուրի Որմզգանայ Թուրատանէֆ բանաստեղծութեան մէջ՝ թաւրնջակ զրուած է իրր Primula, որ է գլ. Primevère (Կովացնծուկ, Կովացնծու, ըստ աւանդելոյ Շահրիմանեանի, զոր տես ի Բարդ): Հայրուսակն եւս, 773, Թաւրնջակի կը թարգմանէ զ'Primevère: իսկ Amarante թուի թէ Հայրուսակի համար, 104, է Անթառամ: տես աստէն Անթառամ ծաղիկ ի Կարգի Ա. նշանազրի: — Արք. Գարիփէ է Gnaphalium (իրն էլ-Բէյտար, Հ. Գ. 1813):

ԶՅ. (5) Դարանփիլ: առզ 54, «մօռ (— ծիրաննպոյն) է հագել»: = Թուրք. Գարկնիլիլ, գլ. (Eller), զոր մեզ այժմ կը կոչենք Շահոքրամ: Գարկնիլիլ կը նշանակէ եւս զլ. Giroflier, որ կու տայ զՄեխակ, գլ. Clou de Girofle, կամ սոսկ Girofle: (Մեխակ է պարսիկ բառն Միյլիկ, 1. Բեւեռ փոքրիկ, 2. Clou de Girofle:)

ԶՅ. (6) Նունուփար: առզ 113, «քուսնի յատակս (Մ' յեզերս) ծովերուն»: = Պրս. Նիյուփէր, Նիյրուփէր, Լիյրուփէր, Նուփէր, Ապուդ: զլ. Nénufar: թուրք. Էօլիւփէր կամ Իւլիւփէր յիշէյի: Ի գիրս մեր կ'ըսուի Շուշան ծովային (իմա՞ ջրային), եւս՝ Կոկոռչի ծաղիկ, Կոկոռ (տես ի Կոկոռոչ), եւ Հարսնամատն:

98. (7) *Ուսամ*. տող 87: = «Մուրտն ու Շուշան (ըստ Ս եւ Կ. իսկ Ե՛ Մուրտն եւ Ուսամն. Հայրուսակ, 389, Մուրտն ու Սուսամն. որ եւ յերես Տ11 Կ'ըսէ՝ թէ «Աւսամն Սալածորեցւոյն՝ ուղղելի է Սուսամն») ու Բրաբիոն՝ հասրաթ են թէ զիրար տեսնուն»: տող 86. որում յաջորդ 87-88 տողից մէջ Կ'ըսուի՝ Սուսամն (Ե. Ս. Կ.) գուլգազ (= գուլ շիկակարմիր) է ներկած, գոյնն է գլուխ կարմիրներուն. յիշտ գեղեցիկ է խիստ պայծառ, բուսնի մէջ պազ աղբիւրներուն»: Թուրք. Սուսամ, գղ. Sésame, հայերէն Կնճիթ կամ Շուշմայ բուսոյ ծաղկներն սպիտակ են՝ ծիրանի կէտերով, մինչդեռ Սալածորեցին Կ'ըսէ «գոյնն է գլուխ կարմիրներուն»: նոյնպէս «բուսնի մէջ պազ աղբիւրներուն» չի յարմարիր Սուսամի: Ես կարծեմ թէ ուղիղն է Ուսամ (Ուսամ գրուած յօրինակին Եազընեանի ի տող 86, փոխանակ Շուշանի), նոյն ընդ թուրք. Հիւսամէ օրու, արբ. Խուզամա. Lavande spica, որ ուսնի կարմիր եւ անուշահոտ ծաղկիս, եւ կը բուսնի թէ՝ յաւազուտս եւ թէ՝ ի ջրարրի տեղիս (իբն Էլ-Բէյտար, Հ. Բ. 791):

99. (8) *Չատր-ծաղիկ*. տոձ 83, «Չամուտաշն ու Չատր-ծաղիկն՝ Կոճակն՝ ծաղկել արտերուն»: = Կէս թուրքերէն, կէս հայերէն. թուրք. Չատր չիշկի (զոր ոմանք թարգմանած են Վրանածաղիկ): գղ. Liseron des champs, Convolvulus arvensis, հայերէն Բաղեզն: Այժմ Բաղեզն կ'անուանենք զգղ. Lierre, թուրք. Սարմաշըզ. բայց ըստ Բժշկարանաց՝ Liseron է Բաղեզն, իսկ Lierre է Շաղապատուկ, զոր ի տեղիս տեղիս Հայաստանի կը կոչեն Սիրող:

100. (9) *Զիգիտամ*. տող 35: = Թուրք. Զիկշեմ չիշկի: տես յ'Ա. Խւլախն ձոր:

101. (10) *Սմբուկ*. տող 46, «մանաւուշ (=մանուշակագոյն) է հագեւ»: = Արբ. Սիւմպիւշ, գղ. Jacinthe, Յակինթ. իսկ Սիւմպիւշի հինգի կամ բումի է նարդոս, զոր տես յիւրում տեղւոջ:

Սուսամ. տես Ուսամ:

102. (11) *Սուսամբար*. տող 119, «Այն Սուսամբար իրստ Ե. իսկ Ս եւ Կ. Գոհար Վարդ) ծաղիկն որ կայ՝ գեղեցկացել (Ե. ինքն կարմիր) պայծառագոյն. Երբ որ բացուի վերեւ թիփին՝ խիստ գեղեցիկ է ու սիրուն»: = Պրա. «Միջյանապիր. ծաղիկն այն՝ որ ընդ գառնալ արեւուն եւ ինքն գառնայ ի կողմն նորա. Կիւնեկիյի չիշելի: Իսկ ոմանք ասեն թէ է սա այն տերեւն անուշահոտ եւ երկայնագոյն Մարսկևա կոչեցեալ. որ արպերէն ասի Մէյհա'նի գուսախո. Գէորգ. — «Սուսամբար. անուշահոտ

խոտ» • Սրուանձտեանց, Մանամայ, 451 • — «Սուսամբարը թէ եւ ծաղիկների թուռում տեղաւորուեցաւ, բայց նա խկապէս լայնատերեւ անուշահոտ խոտ է, եւ ոչ թէ ծաղիկ: Նորա բուրմունքը այնքան խիստ է, որ յիսուն եւ աւելի քայլից հնոտ մարդ կարողանում է հոտոտելիքով հասկանալ նորա ներկայութիւնը պարտիզում կամ այգում: Շատ հայ կանայք, մանաւանդ գիւղացիներից, այս հոտաւէտ խոտի անունով են կոչուում»: Յովիկ. Աթանասեանց, 63: Իրն էլ-Բէյտար, Հ. Բ. 1256, Կ'ըսէ թէ Սիսկենպէր, Sisymbrium, կը նմանի Անանխոյ, դղ. Menthe, բայց քան զայն՝ աւելի լայնատերեւ է եւ աւելի անուշահոտ: Իսկ թուրքերէն Մարսաւա, եւ ուամփօրէն Մարսելնանի, է դղ. Coq des jardins, Herbe au coq: Զգիտեմ թէ ի՞նչ է Սալամորեցւոյն «պայծառագոյն» Սուսամբար ծաղիկն: Եթէ նա գրած է «Գոհար Վարդ» (ըստ Ս եւ Կ), եւ Եազրճեանի օրինակին զաղափարողն փոխած ի «Սուսամբար», իբրեւ ծանօթագոյն անուն, ապա «Սուսամբար = Գոհար Վարդ»ն է ջրային ծաղիկ: Ինչպէս կը ծանուցանէ Գր. Նարեկացի ի Տաղի Վարդավառին, 482:

Դոհար Վարդըն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից:

Ի վեր ի վերայ վարսից ծաւալէր ծաղիկ ծովային:

Ի համատարած ծովէն պըղպըջէր գոյնըն այն ծաղկին:

Մեկնուրիւն բառից Սալամորեցւոյն

Արուգ • տող 3 • անզօր, տկար:

Զամպ • տող 40 • լեռներու վերայ դիզուած ձիւն: տես զոր ինչ գըրեցի յ'Անթառամ ծառամ ծաղիկ:

Թեր • տողք 45, 94 • տերեւ: ըստ Հ. Մկրտչի Անանեան:

Իսկի • տող 109 • բնաւ. երրեք:

Լաւուն լաւուն • տող 91 • կերպ կերպ, կամ «կերպիւ կերպիւ»: Ինչպէս կ'ըսէ յ'34 տողին: «Լավու լավու ձայն: կերպ կերպ անճոռնի ձայն»: Նեւոնդ Վ. • Փիրղալէմեան, Գաւառի բառք:

Զահառիմ • տողք 40 (սխալ է «Զաջառին» յօրինակին Եազրճեանի եւ Հայրուսակ 695, 2846), 80 • (թուի ի Զահ բառէ •) պայծառանալ:

Օրօճ • տող 62 • կը գրուի եւ Որոճ: «Զայն Որոճն՝ որ ի Մարայ կու գայ»: Բժշկաբան (Հայրուսակ, 3258): մանր տեսակն կը կոչուի Որոճիկ, սեռական Որոճկան: «Մէկ ծաղիկ մի կայ... միջի ծաղիկն մօռ կու լինի: կտրես՝ կաթն կարմիր է... զկաթն Որոճկան վերան կաթեցընես՝ հալէ»: Ոսկիփորիկ Զ (22 Ս. Ղազարու): Իսկ թէ ի՞նչ է Որոճ կամ Օրօճ՝ ծանօթարարք չեն պակասիր: «Օրօճ • Գարըր պօնալուրու»: Բառագիրք Զուղայեցւոց: — «Խարըր պօնալուրու: Որոճ»: Հ. Մկրտչի Անանեան: — «Որոճ • Գարըր պօնալուրու: Մանկալայ բաշր • ծովու ճերմակ քա-

րի պէս ակուներով ժժմունք մի է» . նոյնն . — «Cissoidε . Որո՞ւ, կամ Որոճածեւ . է կոր գիծ ինչ երկրաչափական ի ձեւ Որոճի, այս ինքն Գուարըր պօննուխիին» . Զախշախեան, Բոգ, Խո. -Հայ, — «Օրօն . հլունք է ճերմակ եւ երկայն . հաւասար հլունքներուն պէս չէ» . Բառք Խոտրջրեցւոց . — Պրս. «Խառնիւիրէ [= իշու ուլունք] » . ջորեհիլուն . Դադրը պունաւողի, զոր վասն զարդու կարեն ի կորդինո եւ ի պախուցս ջորեաց եւ իշոց» . Գէորգ . Սիմէոն Կամերկապցի փոխանակ Որոճ՝ կ'ըսէ . «Խարեր պօննուղի . ինքն Ջորու ծիծէո կու ասեն, կամ Ջորու ծիծեռ . լաւն՝ խիստ մանտրս է [Որոճիկ, ըստ Զ Ասկիփորիկի] » . (Հայրուսակն : 2636, կը գրէ Ջորու ծծեր :) Վանեցիք կ'ըսեն «Ձմրուկ . չոր խեցի՝ ջըրային ժժմանց . Մանկալայ թաշի (ըստ Անանեանի նոյն է Գարըր պօննուղու, Մանկալայ բաշը), զոր կախեն օրորոցի գերանէն, եւ մանուկը իր թաթիկներով կը խառնէ զայն, անոր չըխկչըխկոց ձայնով կը զուարձանայ . Սրուանձտեանց, Մանմայ, 427 . Եթէ ստոյգ է կմինեանի գրածն թէ գդ. Roreclaine խեցեմորթն՝ թուրքերէն կը կոչուի Մանղալա բաշը պկօնէյի, ուրեմն Որոճ = Գարըր պունաւողու՝ այս ծովային ժժմակիս խեցին է . (ինձ թուր գդ. Tamaris կամ Կորիս կոչուածն :) Արդ՝ երբ կ'ըսէ Մալաձորեցին, սողք 61-62, թէ Ռափիկին սպիտակ է հագել, գեղին քաշել վերայ փորուն, Բոլորն ամէն օրօն շարել (ըստ Ե . ու . Ս Կ շար ին շարուել), նայեցէք ի սպիտակ շարուն . կը նշանակէ թէ Մափիկի ծաղկի մէջն դեղին է, եւ շուրջանակի շարուած են սպիտակ որոճներ =ուլունք : Ա՛յ է թուրքերէն Գարըր բյրնաղը = Ջորույ սմբակ, ըստ Պօզանեանի՝ հայերէն Մոշայ (գդ. Tamaris), ըստ Հ . Յ . Աւգերեանի՝ գդ (Տըսէտ, հայերէն կենիստայ, լաւ եւս Գենիստայ, լաւ (Գեոյիտա), ըստ Վանեցոց՝ Թզմուկ (Խաչատուր քահանայ Տէր-Վարդանսեան, Արեւելեան Սամուլ, 1895 Դեկտ. 1, երես 734, թիւ 48) . Հայրուսակն (3258, 2636, նշն, ծան, 2) նոյն կը համարի զ'Գարըր պունաւողու եւ զ'Գարըր բրենաղը, եւ Օրօն կը կոչէ զգդ. (Տըսէտ, «մեծ կամ փոքր թուփ է, ձիգ ճիւզերով, մանրիկ տերեւներով եւ հասկածեւ ծաղկներով» . (ի թիւ 563, ծան, 2, Տըսէտ, ուղղելի է (Գեոյէտ :)

Օտարաձայն բառ

Ալ . սողք 43, 53, 72 . թուրք . Ալ, շիկակարմիր,

Բէջարէ . սող 75, «Բարձուենեկին գոյնն է պակաս, հոտիկն անուշ է բէջարուն» . պրս. Պիշարէ, անճարակ, հէք, ողորմելի : Սալաձորեցին ըսել կ'ուզէ՝ թէ Հեք Բարձուենեկին գոյնն է պակաս, հոտիկն անուշ : Տես եւ ի Հայերգ, երես 78 . «Կէ՛լ, պէջարայ Կամպար օղլիր» = Ա՛կ, ողորմելի որդի Կամպարի (Կամպուրի ?) . Հայրուսակն, 343, սխալ կ'իմանայ «Բէջար կամ Բէջար», անուշահատ ծաղիկ :

Բիրուն . սող 29 . թուրք . Պիտիւն, բովանդակ, համբէն :

Գուշգազ (ըստ Ե. սխալ է Կուհիազ ի Ս եւ 4)։ տող 87։ այս բառ
կը գտնուի եւ ի Բանաստեղծութիւնս Սայեաթ Նովայի, տպ։ Մոսկուա,
1852։ Երեսք 69, 88, ուր կ'ըսուի յառաջին տեղուո՞չ՝ «ուանդըդ է գուլ-
գազի նման»։ զոր հրատարակիչն, յերես 70. կը մեկնէ «իսաս ար», զուտ
շիկարմիր։ Թուի պարսկերէն, ի Կիւլ = Վարդ բառէ։

Դաստան։ տող 127։ պրս. Տէկրան, պատմութիւն։

Դաստուր։ տող 31։ պրս. Տէկրուր, հրաման, թոյլտուութիւն։

Դարդ։ տող 98։ պրս. Տէրտ, հիւանդութիւն, ցաւ։

Ենգիչարու։ տող 92։ թուրք։ Եկնիյէրի, որ կը թարգմանի Նոր
դինուոր, յայտնի է թէ ի՞նչ էին Եկնիյէրիներն։

Ժանկառի։ տող 65։ պրս. Ժէնկեարի, թուրք. Ճէնկեարի, «ժէն-
գէսի» պղնձի ժանգի գոյն։ բաց կանաչագոյն»։ Յովհ. Գազանճեան,
Բառք Եւզոկիացւոց, Հանդէս Աևսօրեայ, 1898, Երես 305 թ։

Խաս։ տող 107։ արք. Խասս, բուն, անխառն, զուտ, ազնիւ։

Հաւրար։ տողք 86, 101։ արք. Հաւրէր, կարօտութիւն։ իսկ առ
Սալամորեցւոյ՝ կարօտ, ածական։

? Հանաւուզ, Հանավուդ, Հանաւար, Հանաւար։ տող 60։ անուն
գունոյ զոր չկարացի ստուգել։

Հանքար։ տող 23։ թուրք. Գանքար, կենդինար։

Հարդ լինել։ տող 6։ արք. Հարդ, ընկղմումն յորմէ թուրք. Հարդ
օլմագ, ընկղմիլ։

Հըրմզգ. տող 46։ թուրք. Գըրմզզ, կարմիր։

Հիյնար, տող 108։ արք. Գյումիր. զին, յարզ։

Մախենուր, Մախուր։ տող 45։ գունոյ անուն զոր չկարացի ստուգել։

Մանաւուշ. տողք 46, 78։ թուրք. Մէնէվիշ, մանուշակագոյն։

Մաւի. տող 65. թուրք. Մավի, կապյա։

Մօռ. տողք 45, 54, 72, 78։ թուրք. Մօռ, ծիրանեգոյն։

Զայիր չիւան։ տող 42։ թուրք. Զայլր. պրս. Զէմէն, մարդ, մար-
կագեարին։

Պաղամ. տող 94։ պրս. Պէղէմ, Պէղէմ. արք. Պաղամ. թուրք. Պա-
ղամ աղամը. գլ. Bois de Brésil. ըստ Բժշկարանաց՝ Որդան փայտ, որ
կարմիր ներկ կու տայ։

Զառահ. տող 107։ արք. Ճերրահ, վիրաբոյժ։

Զդայ. տող 92։ պրս. Ճեղա, ցցունք. գլ. Aigrette.

Սուրմայ. տողք 63, 65։ պրս. Սիւրմէ, ծարիր։

Ստոքհոլմ. 3 B, Arsenalsgatan

ՆՈՐԱՅԻ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ